
ԵՍ ԴԵՌ ՈՂՋ ԵՄ
Էռնեստ Բեգլարյան

*«Ես դեռ ողջ եմ» բանաստեղծությունների ընտրանին հրատարակվել է անվանի բանաստեղծ **Էռնեստ Բեգլարյանի** ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:*

Գրքում տեղ են գտել հեղինակի տարբեր տարիների ստեղծագործությունները: Դրանք հիմնականում քնարական և փիլիսոփայական գործեր են հայրենիքի, սիրո, կարոտի թեմաներով:

Ժողովածույում առանձին բաժին են կազմում առակները և երգիծական բանաստեղծությունները, որոնք յուրահատուկ տեղ են զբաղեցնում Էռնեստ Բեգլարյանի գրական ժառանգության մեջ:



Լույսի և սիրո բանաստեղծը

Էռնեստ Սանթուրի Բեգլարյանը պատկանում է այն սերնդին, որի մանկությունը խաթարվել է աշխարհակործան պատերազմի արհավիրքներից, ու շատերի թվում նրա հայրը չի վերադարձել Մեծ Հայրենականից: Ահա թե ինչու այնքան թախծոտ, հուզառատ, զգացմունքային, միաժամանակ լավատեսություն ներշնչող են նրա դեռ ուսանողական տարիների առաջին ստեղծագործությունները, որոնք սկսեցին լույս տեսնել Մայր Հայաստանի և Արցախի ամենատարբեր գրական-գեղարվեստական թերթերում ու հանդեսներում:

Անվանի բանաստեղծ Բոգդան Ջանյանը, ողջունելով Է. Բեգլարյանի մուտքը գրական աշխարհ, «բարի ճանապարհի» խոսք գրեց երիտասարդ գրչընկերոջ մասին՝ ընդգծելով նրա ինքնատիպ նկարագիրն ու ձեռագիրը:

«Էռնեստը միշտ ճանապարհի վրա է, հողի և դաշտի վրա, դրա համար էլ նրա երգերը հողաբույր են, դաշտաբույր: Հակառակ մեր մյուս երիտասարդ բանաստեղծներին Բեգլարյանը քչախոս է իր երգերում: Հաճախ այդ երգ կոչվածը մի քանի տող է, բայց ամբողջական է, խորք ու խորություն ունի և կարդալուց էլ մտածել է տալիս: Խորհող բանաստեղծ է նա և խոհն է նրա երգերի մեջ ամենից շատ հնչողը, սակայն այդ խոհը սոսկ մտքի պտուղ չէ, խոհը ծնվել է սրտի ու մտքի դաշնությունից», – գրել է Ջանյանը երիտասարդ գրողի մասին:

Էռնեստ Բեգլարյանի ստեղծագործությունների թեմաները տարաբնույթ են՝ հայրենասիրություն, ծնողասիրություն, մարդասիրություն: Նա երգում էր հայրենի հողը, որի գրկում կա ջերմություն, զորություն և խորություն, ավետում է նոր մարդու ծնունդը և ուզում է, որ այդ նոր մարդը լինի «նախորդների նման տոկուն…»

Պայծառ հավատով է լի Բեգլարյանի քնարական հերոսը, մաքուր են նրա երազները, ջերմ, արևոտ, հուզող ու հուզվող և, որ կարևորն է, նվիրված է իր հայրենիքին: Սեղմ ոճով գրելով հանդերձ, նա ձգտել է յուրաքանչյուր ստեղծագործության մեջ խոր իմաստ դնել ու փիլիսոփայորեն ընդհանրացնել ասելիքը, ճիշտ նշանակետին խփել:

Էռնեստ Բեգլարյանի «Քնարական խոհեր» շարքի կապակցությամբ ԼՂՀ Գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը ժամանակին այսպես է բնութագրել նրա բանարվեստը. «Կաթիլ-կաթիլ է գալիս Էռնեստ Բեգլարյանի երգը, անմիջական է նրա երգը, անմիջական է նրա բանաստեղծական տողը, անկեղծ, առանց ձևականության ու ձևի: Տառապանքով, դժվար ու համառ. ահա Էռնեստ Բեգլարյանը»:

Է.Բեգլարյանի պոեզիան արցախյան քնարերգության ամենազուլալ աղբյուրներից է: Իսկ այդպիսին է, որովհետև այդ պոեզիայի ակունքը բանաստեղծի անկեղծ խոստովանություն է, որովհետև իր կյանքն, իրոք, նա այդպես է ապրել՝ տուրք չտալով «ժամանակի պահանջներին», այլ պահել-պահպանելով իր հոգու ու տողի մաքրությունը, այն տողի, որը ծնվել է լույսից, ազնիվ սիրուց ու տառապանքից:

Լույսը տանս մեջ
Միշտ վառ եմ պահում,
Չէ՞ որ երգերս
Լույսից եմ քամում:

Իրոք, լուսավոր է Էռնեստ Բեգլարյանի քնարերգությունը:

Ընթերցողը սիրով է ընդունում նաև հեղինակի երգիծանքը: Բանաստեղծը չէր հաշտվում անարդարությունների հետ: Էռնեստ Բեգլարյանը կյանքում ազնվորեն տքնել ու արարել է, իր իսկ խոսքերով, երբեք բեռ չդառնալով աշխարհի համար: «Ճամփիս մեծ մասը ոտքով եմ անցել», – անկեղծ խոստովանում է նա: Ահա թե ինչու մինչև կյանքի վերջին հանգրվանը համեստ ու անխաթար մնաց նրա պոետական ու մարդկային նկարագիրը:

Երկար տարիներ դասավանդելով Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջում, Էռնեստ Բեգլարյանը ոչ միայն խոր ու կայուն գիտելիքներ էր հաղորդում ուսանողներին, այլև սովորեցնում էր նրանց սիրել հայրենիքը, լինել հողի անխոնջ մշակներ, իսկական նվիրյալներ:

Էռնեստ Բեգլարյանն արցախյան պոեզիայում իր անփոխարինելի տեղն ու դերն ունի: Եվ չնայած նա հեռացել է կյանքից, բայց մնացել է մեզ հետ և ապրում է իր ստեղծագործություններով, իր թողած հարուստ ժառանգությամբ:

Էռնեստ Բեգլարյան

<< ԱՐԵՎ ԵՎ ՆԱՐԻՆՋ >> ԳՐՔԻՑ /1970/

ԿԱՐԿԱՉԻ՛Ր, ԱՂԲՅՈՒՐ…

Կարկաչի՛ր,
Աղբյուր իմ
Սառնորակ,
Կարկաչիր
Այս հեռու
Սարերում,
Միշտ այդպես
Չես մնա
Դու անհայտ,
Միշտ այդպես
Չես մնա
Անանուն:

***
Միջօրեին նարինջ եմ քաղում արևից,
Խոշոր ու հասուն նարինջներ,
Պիտ վայելեմ դրանք մայրամուտից հետո,
Որ գիշերն էլ անգամ ջերմություն հաղորդեմ
Աշխարհին ու մարդուն…
Միջօրեին նարինջ եմ քաղում արևից …

***
Այն դրոշակն եմ ես բռնած ամուր
Միշտ առաջ գնում,
Որով իմ հայրը հաղթեց թշնամուն՝
Հայրենականում:

Այդ դրոշակը այնքան ժամանակ
Կտանեմ առաջ,
Մինչև իմ որդու թևերն ամրանան…
Գա ինձ ընդառաջ:

ՀԱՅՐԵՆԻ ՍԱՐԵՐ

Որպես երկու հզոր սյուներ, դուք պահում եք ձեր ուսերին
Իմ հայրենի երկինքը լուրթ՝ զուգված պայծառ բյուր աստղերով,
Մանկությունից իմ անկաշառ սերն է վառվում ձեր լանջերին,
Իմ աստղազարդ, իմ աստղավառ, իմ աստղամերձ Քիրս ու Մռով:

Բախտավոր եմ, որ աշխարհում ունեմ ձեզ պես բարձր սարեր՝
Կանաչ-կարմիր գոտի կապած, գագաթներիդ՝ ձյունե պսակ,
Ձեր լանջերին՝ պաղ աղբյուրներ, հովվի կանչեր, մարմանդ հովեր,
Ծաղկահանդես, հոգեզմայլ և հովվական սիրո հասակ:

Ձեր հոյատես կատարներին շողշողում է մի վառ արև,
Որ տրված է որպես նվեր իմ գեղեցիկ լեռնաշխարհին,
Այդ արևով լանջերը ձեր միշտ կանաչ են մնում, սարե՛ր,
Այդ արևով նահանջ չկա մեր վերելքի ճանապարհին:

Որպես երկու հզոր սյուներ, դուք պահում եք ձեր ուսերին
Իմ հայրենի լեռնաստանը՝ արցախյան վառ արևով,
Մանկությունից իմ անկաշառ սերն է վառվում ձեր լանջերին,
Արևավառ, արևատես, արևամերձ Քիրս ու Մռով:

ԳԱՐՈՒՆ

Արեգակը՝ քեզ վրձին,
Հողը՝ կտավ լայնածիր,
Ծիլ ու ծաղիկ ու բողբոջ
Քո նկարներն են,
Որ ծնվել են քո ջանքով,
Շնչում՝ տված քո կյանքով
Եվ իրենց կյանքը ամբողջ
Քեզ հետ կապել են:
Գարո՛ւն, տեսքդ լուսահորդ,
Հոգիդ, սիրտդ հրաբորբ,
Եվ հայացքդ թարմ ու նոր

Կյանքով լեցուն են,
Գարո՛ւն, ջահել նկարիչ,
Տաղանդավոր նկարիչ,
Նկարիչները բոլոր
Քեզ նախանձում են:

ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՐԵՐԸ

Աղավնիներն են թառել նորաշեն տան քիվերին,
Արևի վառ շողերը՝ հայացքներին, թևերին:
Կապտակապույտ ու անբիծ հեռաստանին են նայում,
Եվ մեր խաղաղ երկինքն է նրանց սիրտը հմայում:

Ունկնդրում են սիրով լի ուրախ կյանքի կարկաչին…
Ի՜նչ լավ է, նրանք են այս տան հյուրերն առաջին:

ՊԱՏԱՍԽԱՆԸ
Հորս հիշատակին

Գարնան կանաչ հմայքով
Լցված իմ հոգին,
Իջնում էի գետափով
Թթենու այգին:

Ես թեքվեցի գետափից,
Արահետն ընկա,
Այդ պահին ինձ հանդիպեց
Մի զինվորական:

Նա մոտեցավ և ամուր
Սեղմեց ինձ կրծքին,
Ասաց. – Սանթուրի պուճուր
Տղան չե՞ս, անգի՛ն…

– Այո՛… հորս չե՞ս տեսել,
Քեռի, ա՛յ, քեռի,
Հայրս դեռ տուն չի դարձել
Դաշտերից կռվի…

…Պատասխանի փոխարեն
Խոշոր մի կաթիլ
Նրա աչքից գլորվեց՝
Ընկավ իմ այտին:

Պատասխանը լուռ ձգվեց,
Երկարեց անվերջ,
Եվ մի սպի նա թողեց
Մանուկ սրտիս մեջ:

ԾՈՎԻ ԵՐԳԸ
Արամ Խաչատրյանին

Հուզված է ծովը…
Եվ ալիքները

Հարվածով խրոխտ
Զարնվում են անվերջ
Ժայռի կողերին՝
Արծաթ վարսերը
Տված հողմերին...
Ինչքա՜ն նման է
Ծովն իր խենթ պահին
Այս ճերմակահեր
Դաշնակահարին…

ՄՈՐՍ

Շոգից քրտնել եմ.
Վազում եմ դեպի
Շվաքը ծառի …
Իսկ մայրս ահա՝
Մեջքով արևին,
Մեր տան պատի տակ
Նստել է քարին
Ու տրտնջում է.
Իբրև արևը
Այնքան էլ ջերմ չէ:
Ու խորհում եմ ես,
Որ նրան հիմա
Սրտի հուր է պետք
Եվ արև՜, արև՜…

***
Բողբոջը բացվեց…
Մի նոր կյանք ժպտաց
Զարթնող աշխարհին:
Նույն պահին հեռվում
Մի տերև ընկավ՝
Վառված կարոտով
Զարթնող աշխարհի…

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Նոր մարդ է ծնվել մեր ընտանիքում,
Աչքդ լույս, երկի՛ր, աչքդ լույս, երկի՛նք,
Թող նա մեծանա, երկի՛ր, քո գրկում,
Քո հայացքի տակ, հայրենի երկի՛նք:
Եվ նախորդների նման իր տոկուն
Ձեզ համար դառնա այուն ու զորավիգ…

ՍՐՏԻՍ ՄԻՋՈՎ

Սրտիս միջով եմ
Լսում քո սրտի
Սիրո նուրբ դողը…
Եվ թվում է ինձ՝
Ավելորդ բան է
Այս լսափողը:

***
Առվից է գետը սնվում, զորանում,
Իսկ ծովը՝ գետից:
Ծովի պարգևած բերկրանքն ըմպելիս
Ինչո՞ւ են հաճախ առուն մոռանում:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Օ՜ համբերություն,
Դու իմ խենթ հոգու
Լարված զսպանակ,
Զգվում ես հաճախ
Եվ քիչ է մնում,
Որ հատվես մի տեղ,
Բայց անչար հոգուս
Անաչառ խոսքից
Դու ետ ես գալիս
Քո դիրքը նախկին…

ԽՈՀ

Արևի համար մեկ եք դուք, ծառե՛ր,
Դուք մեծ ու փոքր ծառեր անտառի,
Ուղարկում է նա իր շողերը ձեզ
Ու ժպտում վերից հայացքով բարի:

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, ա՜յ բարձր ծառե՛ր,
Ստվեր եք ձգում ձեզնից ցածրերին:

ՔԱՅԼԵՐ

Քայլե՛ր, իմ քայլե՛ր…
Թեկուզ եղել եք
Դուք մերթ երերուն
Ու մերթ համարձակ,
Մերթ մի մատնաչափ,
Մերթ էլ ընդարձակ,
Սակայն չեք շեղվել
Իսկական ճամփից
Ոչ մի ժամանակ…

***
Համեստությո՛ւն,
Պարզ իմ աղբյուր,
Համեստությո՛ւն,
Ծաղիկ իմ նուրբ,
Համեստությո՛ւն,
Զարդ իմ միակ,
Կյանքիս ծովում՝
Ոսկե նավակ:

ՀԱՏԻԿ

Ցանքի ժամանակ

Հատիկը ընկավ
Մի ժեռ քարի տակ,
Եվ քարը կարծեց
Նա կմահանա՝
Դեռ ծիլ չարձակած…
Բայց նա չգիտեր,
Որ հողն էր մոր պես
Հատիկն այդ գրկել:

ՆՈՒՅՆԻՍԿ ՉԻՄԱՑԱՆ

Ահեղ փոթորկից
Տուժեցին մի օր
Ծառերն անտառի,
Ամպրոպի զարկից
Քիչ մնաց փլվեր
Սեգ կաղնին անգամ:
Իսկ մացառներն ու
Թփերը գաճաճ,
Որ պահվել էին
Թիկունքում կաղնու,
Նույնիսկ չիմացան
Փոթորիկն ինչպես
Եկավ ու անցավ…

***
Աղջիկս է քնած: Դուք ձայն չհանեք,
Քաղցր երազով տարված է հիմա:
Ո՞վ գիտե, գուցե թռչում է երկինք,
Որ աստղեր բերի քույրերի համար,
Գուցե իր սիրած տիկնիկների հետ
Սարում ծաղիկ է քաղում մանեման…
Աղջիկս է քնած…

***
Վատ բան չեմ արել կյանքում ոչ-ոքի,
Սակայն ինչո՞ւ եմ կարմրում այսպես.
Երևի մեկը անամոթ է խիստ,
Նրա փոխարեն ամաչում եմ ես:

***
Ես չքայլեցի հարթ ճանապարհով:
Թուփ ու մացառի հետ կռիվ տալով
Անցա իմ ճամփան…
Դժվարությունը աչքիս քաղցրացավ,
Երբ ամեն քայլով
Ինձ բարձունք տանող ուղին կարճացավ:

ԻՆՉՈ՞Ի ՈՒՇԱՑԱ

Ինչպե՞ս եղավ, որ չիմացա՝
Երբ գնացին ընկերներս,
Ախր ես շատ շուտ արթնացա,
Ե՞րբ գնացին ընկերներս:

Նրանք արդեն մոտեցել են
Երազանքի բարձունքներին.
Ինչո՞ւ, ինչո՞ւ ես ուշացա,
Ե՞րբ գնացին ընկերներս:

Ընկերներից ետ մնալը՝
Ետ մնալ է նաև կյանքից,
Ինչո՞ւ ես այդ ուշ հասկացա,
Ե՞րբ գնացին ընկերներս:

ԷՔՍՊՐՈՄՏ

Ձղջման կրակն է այրում իմ հոգին,
Երբ նայում եմ ես այս ծառի վերքին:

Ա՜խ, ես եմ տվել այդ վերքը նրան
Անհոգ օրերին իմ պատանության:

Բայց ծառը դարձյալ միշտ ժպտում է ինձ,
Իսկ ես… գետնին եմ նայում ամոթից:

***
Հիշում եմ, մայր իմ,
Ապտակեցիր ինձ
Սխալիս համար:
Հետո զղջացիր.
Ինձանից գաղտնի
Սիրտդ լաց եղավ…
Շնորհակալ եմ
Ես հազար անգամ,
Մայր իմ, քեզանից,
Դու չապտակեիր,
Կյանքն ավելի պինդ
Կապտակեր ինձ…

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ

Եթե վառվում է, թող կյանքը մարդու՝
Մոմի պես վառվի,
Շուրջը լույս տալով հալվի, սպառվի,
Եվ ոչ թե մխա սև ածուխի պես
Ու լցնի մարդկանց աչքերը ծխով…
Եթե վառվում է, թող կյանքը մարդու
Մոմի պես վառվի:

***
Դեղնականաչ շրթից
Գարնան արեգակի
Լեռնալանջին
Կանաչ ժպիտներ են մաղվում
Եվ համբույրներ ոսկի…
Լեռնալանջից վերև
Արծիվն է թևածում.

Կարծես հսկում է նա,
Որ ամպերը հանկարծ
Այդ զարդերը գարնան…
Չգողանան:

ԱՐԵՎՆ ԻՆՁ ԸՆԿԵՐ

Արևն ամեն օր ինձ ողջունում է
Մեր տան դիմացի սարի կատարից,
Ես մանկան նման զվարճանում եմ,
Երբ բարի դեմքով նա ժպտում է ինձ:

Արևն ամեն օր ինձ ողջունում է,
Նոր լիցք է տալիս ինձ լուսաբացին…
Թող ինձ նախանձեն. ես այլ սեր չունեմ,
Այլ ընկեր չունեմ արևից բացի:

ՊԱՏԳԱՄ

Թե ծովը քեզ շատ է հուզում,
Լավ սովորիր նրա լեզուն:
Երբ ծիծաղի նա խենթուրախ
Ու կանչի քեզ գիրկը իր պաղ,
Չշփոթվես, անփորձ տղա՛,
Ու չտարվես տեսքով նրա:
Ծիծաղում է ծովը նույնիսկ
Մարդուն հատակն իր տանելիս…

<<ԶԱՐԹՈՆՔ>> ԳՐՔԻՑ /1978/

ԻՄ ՃԱՄՓԱՆ

Կանաչ գրկից իմ գյուղի՝
Վառ լույսերով ողողուն,
Մերթ ոլոր ու մերթ ուղիղ
Ճամփաս ձգվում է հեռուն:

Գյուղիս պատկերն՝ իմ հոգում,
Անմար հույս ու հավատով,
Որպես ճամփորդ մի տոկուն,
Ես քայլում եմ այդ ճամփով:

Եվ ես գիտեմ, որ նա ինձ
Մի օր բարձունք կտանի,
Ու ես կերգեմ աստղերին
Փառքը մեր լեռնաստանի:

ՕՐԸ

Օրը թող լինի
Լեցուն հասկի պես՝
Ծանրորեն հակված
Հայրենի հողին…

Օրը թող լինի
Թեթև հովի պես՝
Տոթակեզ լեռան
Ճակատը շոյի…

Օրը թող լինի
Սիրո դողի պես՝
Սրտիս խնդության
Թրթիռներ բերի:

ԵՍ ՂԱՐԱԲԱՂՆ ԵՄ

Ես Ղարաբաղն եմ,
Ղարաբաղը նոր,
Ճակատս՝ միշտ բաց,
Ժպիտը՝ դեմքիս,
Քայլում եմ դեպի
Ափեր նորանոր,
Արևներ վառած
Արև ճամփեքիս:
Ես Ղարաբաղն եմ,
Ղարաբաղը նոր,
Իմ գլխի վերև՝
Մռովն է կապուտակ,
Կերտում եմ կյանքիս
Շենքը լուսավոր
Եղբայր լեռների
Հայացքների տակ:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԱՇՈՒՆ

Մեր ծաղկածուփ սարերի
Անմարելի վեհությամբ,
Այգիների, դաշտերի
Հմայքներով խանդավառ,
Իմաստունի պես խոհուն
Պայծառամիտ, ծանրաքայլ՝
Եկար՝ բերք ու բարիքով,
Ղարաբաղյան իմ աշու՛ն:

Եղբայրության երգերով,
Առատության բերքերով,
Բարությամբ լի հայացքով,
Պայծառադեմ, ոսկեփայլ,
Արևախինդ շենքերով
Ու շինարար ձեռքերով՝
Եկար՝ շաղ ու շողի մեջ,
Ղարաբաղյան իմ աշո՛ն:

Առատության սեղան ես
Բացել աշխարհի դիմաց,
Հպարտությամբ, հրճվանքով,
Գերել սրտերը մարդկանց,

Ոգևորված նոր կյանքի
Սխրանքներով փառապանծ
Եկար՝ երգիս շունչ տալով,
Ղարաբաղյան իմ աշո՛ւն:

ՀԱՎԱՏԱ ԻՆՁ

Դու հավատա ինձ,
Որ հողագործ եմ.
Քո լեզուն այնքա՜ն
Լավ եմ հասկանում,
Քեզնից այնպիսի
Գորգեր կգործեմ,
Որ փառաբանվեն
Համայն աշխարհում:
Դու հավատա ինձ,
Իմ հայրենի հո՜ղ,
Որ բախտիդ համար
Մաքառում եմ ես,
Որ անբիծ մնա
Դեմքդ արևոտ
Ու ժպտաս պայծառ
Արեգակի պես:

ՔԵԶ ՊԱՏՄԵՑԻ

Քեզ պատմեցի մի օր
Մեր լեռների մասին,
Նրանց կրծքանշան
Արևների մասին,
Կախարդական սրինգ
Աղբյուրների մասին,
Հավերժական կանաչ
Գարունների մասին…
Քեզ պատմեցի մի օր
Արեգակից ծնված
Իմ նոր լեռնաշխարհի
Ամեն ինչի մասին,
Եվ դու հիացքով
Լսում էիր ինձ…

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻՆ

Գարնանամուտին
Ես անտառ մտա.
Անքնությունից
Օրորվում էին
Ծառերն անտառի.
Մոտալուտ գարնան
Շնչով համակված,
Քանի՜ գիշեր է
Չեն քնել նրանք
Եվ մտորում են
Մոր նման բարի:

ԱՌՈՒՆ

Մատաղ ծառին
Պաղ ջուր տարավ
Կապույտ առուն,
Գարնան համբույր
Ու բույր տարավ
Կապույտ առուն,
Արթնացումի
Կանաչ երգը
Իր շուրթերին,
Մեր ու ավյուն
Ու հուր տարավ
Կապույտ առուն:

ԾԱՌ ԻՄ

Բողբոջիր, ծա՛ռ իմ, բողբոջիր,
Սրտի մեջ ամեն բողբոջիդ
Իմ տենչն ու երազն են անբիծ…
Կանաչիր, ծառ իմ, կանաչիր,
Քո ամեն տերևի միջից
Արևոտ գարունն է ժպտում ինձ…
Ինձ կանչիր, ծառ իմ, ինձ կանչիր,
Խոհերս խառնիր քո կանչին,
Գարունն այս դու ես բերել ինձ…

ՓՈԽԿԱՆՉ

Սառցակալած
Առվի լեզուն
Հանկարծ բացվեց
Բլբլաց:
Նրա շրթին
Արեգակի
Զվարթ երգը
Թրթռաց,
Որպես փոխկանչ
Երախտիքի՝
Սրտի խորքից
Դուրս թռած…

ԱՐԵՎԸ

Մարտում ընկած հորս հիշատակին

Երազիս մեջ
Գրկել էի
Հրակարմիր
Մի արև,
Մանկան նման
Ուրախացած
Ելնում էի
Սարն ի վեր:

Ու երբ հանկարծ
Աչքս բացի՝
Գարնան կապույտ
Երկնքից
Մի արև էր
Հուր շողերով
Մտերմաբար
Շոյում ինձ:
Ա՜խ, թվաց այն
Հորս փրկած
Արեգակն էր
Կենարար,
  Հորս սիրով
Սիրտս թովում,
Ճառագում էր
Ինձ համար…

***
Քնիր, բալի՛կ իմ,
Քնիր անվրդով,
Ոչ-ոք չի կարող
Քունդ խանգարի:
Թեժ կռվում զոհվեց
Քո պապը արի,
Որ խաղաղ լինի
Քունը բոլորի…

ԾՈՎԻ ԱՓԵՐ

Ծովի համար պարիսպ՝
Ծովի ափե՛ր:
Ծովին գետեր տվող՝
Ծովի ափե՛ր:
Ծովից կաթիլ չուզող՝
Ծովի ափե՛ր:

ԱՉՔԵՐՍ

Անցած օրերի
Տխրությամբ լեցուն
Աչքերս,
Ներկա օրերի
Բարությամբ լեցուն
Աչքերս,
Գալիք օրերի
Վեհությամբ լեցուն
Աչքերս…

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԶԻՆՎՈՐԻՆ

Երգդ գրեցիր
Ցուրտ խրամատում.
Որտեղի՞ց այսքա՜ն
Ջերմություն ու հևք:

Ամոթից՝ դեմքս
Քրտինք է պատում,
Որ չունեմ ես էլ
Այդպիսի մի երգ…

ԱՐԵՎԻ <<ՀԵՏՔԵՐԸ>>

Մայր հողի վրա
<<Հետքեր>> է թողնում
Ճամփորդ-արևը.
Նրա հետքերը՝
Կանաչ ծիլերն են,
Կանաչ տերևը,
Մանկան ժպիտը,
Հևքը օրերի…
…Ի՜նչ գեղեցիկ են
<<Հետքերն>> արևի:

ԻՂՁ

Կանաչ արտի
Կանաչ շրթին
Կանաչ երգ կա
Ու երազ,
Որ կդառնան
Մի օր հուռթի
Ու կդառնան
Ոսկեվարս:
Եվ կդառնան
Ոսկի հասկեր,
Ամռան հովից
Կծփան,
Ապա՝ ցորնի
Լույս հատիկներ,
Եվ ցորեն հաց
Ոսկեփայլ:
Թող իմ երգն էլ,
Իմ երազն էլ
Լոկ հաց դառնան,
Ցորեն հաց:

ՀԱՐՑՐԵՔ ՔԱՐԱՓԻՑ

– Չգիտե՞ք ինչու
Ջրվեժն ավելի
Զորեղ է գետից…
– Հարցրեք ջրվեժի
Ոտքի տակ ամուր
Կանգնած… քարափից:

***
Ես՝ մի պտղունց հող,
Արևի մի շող
Ու մի կաթիլ ջուր,

Բայց դու, սիրելի՛ս,
Մի ողջ աշխարհ ես
Ինձնից պահանջում…

ԵՐԲ ԼՔՈՒՄ Է

…Ու հաճախ էլ ես
Իմ ստվերին եմ
Ասում մտքերս,
Երբ լքում է ինձ
Մոտիկ ընկերս:

ԾԱՌԻ ՊԵՍ

Զորացիր
Ծառի պես՝
Միայն հողի գրկում,
Քո մայր հողի…

Ծերացիր
Ծառի պես՝
Միայն հողի գրկում,
Քո մայր հողի…

Մահացիր
Ծառի պես՝
Միայն հողի գրկում,
Քո մայր հողի…

***
…Ջուրը հոսելուց
Չի հոգնում, բնա՛վ,
Միայն թե ճամփին
Պարապ չմնա…

ՔՈ ՊԱՏԿԵՐԸ

Օրվա դեմքի վրա
Քո պատկերն է լուսե՝
Մեգ ու մշուշ ցրող
Ժպիտներով,
Դրա համար օրս
Արևոտ է, իմ սե՛ր,
Սիրտս՝ լեցուն սիրո
Թրթիռներով…

***
Օ՛ր, քեզ հետ
Ես զարթնել,
Լույսերս
Վառել եմ,
Ու քեզ հետ
Տոկացել,
Հոգսերս

Տարել եմ,
Ես քեզ հետ
Զորացել
Ու քեզ հետ
Փայլել եմ…

ԶԱՐԹՈՆՔԻ ՊԱՀԻՆ

Նոր էր անտառը
Իր աչքը բացում,
Կայծակն այդ պահին
Զարկեց մի ծառի…
Բացվող բողբոջի
Մեղմ շրշյունի հետ
Լսեցի նաև
Հառաչն անտառի…

ՀՈՒՅՍ ՏՎԵՑ

Երբ հայրս զոհվեց,
Խորհում էի ես,
Թե ինչպես կյանքում
Կապրեմ առանց հոր:
Կայծակից ընկած
Ծառի արմատից
Ելած շիվը ինձ
Հույս տվեց մի օր…

ՄԻՇՏ ՎԱՌ

Լույսը տանս մեջ
Միշտ վառ եմ պահում,
Չէ՞ որ երգերս
Լույսից եմ քամում:

ԳՈՒՅԵ

Գուցե կյանքը ինձ
Այն չպարգևեց,
Ինչի մասին ես
Երազում էի,

Գուցե բաժինն իմ
Ուրիշին տվեց,
Երբ գլխակորույս
Ես վազում էի…

ԴՈՒ ՉԵՍ ՆԿԱՏՈՒՄ

Ես քո կրակով
Վառվում եմ, սեր իմ,
Դու չես նկատում,
Քո աչքի առաջ
Հալվում եմ, նորից

Դու չես նկատում:
Սիրուդ հնոցում
Ես շիպ-շիկացած
Մետաղի նման,
Քո կամքին հլու
Ծալվում եմ, դարձյալ
Դու չես նկատում:
Չեմ կարողանում
Ես քո պաղության
Գաղտնիքն իմանալ…

***

Լեռների վրա
Ամպերն են ննջում,
Իսկ դաշտում արտը
Անձրև է տենչում…

ԱՐԵԳԱԿԻ ՀԱՅԱՑՔՈՎ

Արեգակի հայացքով
Թե նայես վրաս,
Ես կհալվեմ ձյունի պես
Հանուն քո սիրո:
Եվ իմ ամեն կաթիլը
Ծաղիկ կդառնա,
Ու քո սիրտը կլցնի
Իմ ծաղկաբույրով:
Արեգակի հայացքով
Թե նայես վրաս…

ԱՅԴՔԱՆՆ ԷԼ ԲԱՎ Է

Մի կտոր ամպ կա,
Մի կտոր արև՝
Հոգուս երկնքում,
Այդքանն էլ բավ է,
Որ գարնան երգեր
Ծնվեն իմ հոգում…

***

Ոչ-ոք չի կարող
Քեզ ինձ պես սիրել.
Բարի հայացքով
Նայիր դու վրաս…
Դու սրտիս մեջ ես,
Որպես վառ արև.
Արևի աչքով
Նայիր դու վրաս…
Հույս ու հավատ ես
Դու ինձ նվիրել.
Հույս ու հավատով
Նայիր դու վրաս…

ԷՔՍՊՐՈՄՏ

Սերմի հետ հողում
Հույսեր թաղեցի
Եվ լույսեր բարի,
Դուրս ելավ ծիլը
Եվ ժպտաց ուրախ
Ինձ ու աշխարհին…

ԶԱՐԹՈՆՔ

Ամպերի խոլ բախումներից
Երկինքն է գոռ որոտում,
Եվ երկնային անհուններից
Զուլալ անձրևն է հորդում:

Վառ ժպիտ է խաղում հովվի
Դեմքի վրա վարդագույն,
Հնչեղ ձայնով հորդ անձրևի
Նրա սիրտ է նվագում:

Չէ՞ որ շուտով արոտներում
Կյանքը կտա կանաչին,
Եվ նա կզգա ջերմ ու անհուն
Գարնան բուրմունքն առաջին:

ԴՈՒ ԵՐԱՆԻ ՏՈՒՐ

Դու երանի՜ տուր,
Սիրտ իմ, ա՛յն սրտին,
Որ բռնկվում է
Սիրո մի կայծից,
Արտասվում է լուռ
Վշտից մի կաթիլ
Եվ չի ընկճվում
Շանթի հարվածից:
Դու երանի՜ տուր,
Սիրտ իմ, ա՛յն սրտին,
Որ կռվի մեջ էլ
Դարձած վիրակապ՝
Վիրավոր ձեռքն է
Կապել մարտիկի
Եվ նորից նրան
Մղել դեպի մարտ…
Դու երանի՜ տուր,
Սիրտ իմ, ա՛յն սրտին,
Որ կյանքի երգ է
Միշտ պահում շրթին:

ՓՈԽԱԴԱՐՁ ՍԵՐ

Մի բուռ հող է
Ժայռի կրծքին,
Մի մասրենի,
Հավերժ իրար

Հավատարիմ
Ու սիրելի…
Այդ փոխադարձ
Սերն է նրանց
Պահում կանգուն՝
Այս բարձունքում:

***

Քարերի մեջ էլ
Կյանք կա ու երազ,
Քարերի մեջ էլ
Ապրում է երգը:
Քարերի միջից
Վառ արևին է
Ծիլը երկարել
Իր կանաչ ձեռքը:

ՀԵՆԱՐԱՆ ԵՍ ԻՆՁ

Քայլելու պահին
Դու ամեն անգամ
Ինձ ետ ես պահում
Սայթաքումներից,
Հո՛ղ իմ հայրենի,
Ահա միշտ այսպես,
Իմ ամբողջ կյանքում
Հենարան ես ինձ…

***

Թե տենչ ու երազ
Ունես քո հոգում,
Ունես դու նաև
Քայլելու պահանջ:
Ճամփա՞ ես ընկել,
Միշտ առաջ գնա՝
Ժամանակի պես
Համա՛ռ, աննահանջ…

ՄԻԱՅՆ ՉՄԱՐԻ

Ինչ կրակ
Լինում է,
Թող լինի՝
Հնոցի,
Օջախի,
Թե՝ հոգու,
Միայն թե
Չմարի,
Միշտ մնա
Բորբոքուն…

***

Ստվերս ինձնից
Գուցե շուտ հասնի

Քո գագաթը, լե՛ռ,
Քանզի՞ նա չունի
Ուսերի վրա
Ոչ մի հոգս ու բեռ…

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ

Իր ողջ էությամբ
Գեղեցկություն է
Ծաղիկը, իրա՛վ,
Բարություն, ժպիտ,
Հմայք է ցոլում
Թերթերից նրա:
Եվ ամեն անգամ
Ծաղիկ պոկելիս
Իմ սիրտն է դողում.
Ինչպիսի՞ փայլից
Ու երանգներից
Զրկեցի նրան…

ՀԻՇԻՐ

Քեզ համար լուսանում,
Քեզ համար են մթնում
Իմ կյանքի օրերը,
Բալի՛կ իմ:
Ծաղկումիս գույները,
Ծաղկունքիս բույրերը
Ես քեզ եմ նվիրում,
Ծաղի՛կ իմ:

***
Երբ ոտքս հանկարծ
Առնում է քարի,
Նոր եմ հասկանում
Խորհուրդը քայլի:

***
Ամենքի մոտ չէ
Արյունը սրտի
Շուրթերով խոսում,
Թեկուզ այն սրտի
Միջով է հոսում…

***
Անձրևն ուշացավ,
Բայց չվհատվեց
Մայր հողը բերրի,
Հույս հայացքն իր
Հառեց երկնքով
Սահող ամպերին:

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

1

Այդ երեկ էր.
Գետնափոր տուն,
Աղոտ ճրագ,
Օջախի մեջ՝
Մարող կրակ,
Կրակի շուրջ՝
Դալուկ դեմքեր,
Կյանքի ցրտից
Սառած ձեռքեր,
Քիչ թանապուր,
Մի կտոր հաց,
Նրանց կարոտ
Աչիկներ թաց…

2

Սա այսօր է.
Հոյակերտ տուն
Իլլիչի լամպ,
Անմար կրակ,
Կրակի շուրջ՝
Առույգ դեմքեր,
Կյանքի հրով
Կոփված ձերքեր,
Ծով լիություն,
Խաղաղություն
Եվ աչիկներ՝
Գոհ ու խնդուն:

ԻՄ ԵՐԱԶՆԵՐԸ

Իմ երազները
Իմ ծաղիկներն են,
Որ կյանք են առել
Իմ արդար ջանքով,
Նրանց պես անմեղ
Իմ բալիկներն են՝
Լցված ծաղկունքի,
Արևի կյանքով…
Ինձ հեռո՛ւ, հեռո՛ւ
Աշխարհներ տանող
Լայն ճամփաներն են
Իմ երազները:

<<ՈՒՇԱՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԳՐՔԻՑ /1991/

ՀԱՅՐԵՆԻՔ

Դու իմ տունն ես,
Ես՝ քո դուռը,
Դու իմ ջուրն ես,
Ես՝ քո գուռը…
Ապրում եմ քո
Երկնի ներքո –

Դու՝ արմատն իմ,
Ես՝ շիվը քո…

ԱՆՈՒՇ ԵԶԵՐՔ

Դու իմ հոգու
Անդորրություն,
Արևաշող
Երգ ու տարերք,
Սրտիս անմար
Սիրով օծված,
Իմ հայրենի
Անուշ եզերք:
Ջերմությամբ լի
Դու մոր օրհնանք,
Ինձ տուն կանչող
Մայրական ձեռք,
Սիրտս սրտիդ
Կապող երակ՝
Իմ հայրենի
Անուշ եզերք:

ԼԵՌՆԵՐԸ

Այս լեռները հին են,
Բայց արևը նոր է,
Միշտ էլ գարնան օր է
Լեռնաստանում,
Մռով սարի լանջից
Կանաչաթև հովը
Ծաղիկների բույրն է
Հեռուն տանում:
Ամեն ժայռաբեկոր
Մի արձան է խոսուն,
Պաղ աղբյուր է հոսում
Նրա կրծքից,
Ամեն ժայռաբեկոր
Կուռ վահան է եղել
Եվ խոսում է անցած
Մեր սխրանքից:
Այստեղ հազար ու մի
Տենչ ու երազ ունի,
Կանչ ու մուրազ ունի
Մարդը լեռան,
Որ կապել է հավետ
Կյանքը այս լեռներին,
Ու լեռները՝ իրենց,
Բախտը՝ նրան…

ՏՈՒՆԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Դու իմ հոգու խնդություն՝
իմ տունդարձի ճանապարհ,

Քաղցր պահի կրկնություն՝
իմ տունդարձի ճանապարհ:
Ծաղկեպսակ կարոտի,
հարազատի ջերմ հայացք,
Իմ նոր երգի հայտնություն՝
իմ տունդարձի ճանապարհ:
Սիրտս քեզնով է կապվում
օջախի հետ հայրական,
Իմ զոհված հոր հարություն՝
իմ տունդարձի ճանապարհ:
Կուզեմ՝ կյանքում իմ բոլոր
ճամփաները քեզ նման,
Ուր էլ լինեմ՝ բերեն տուն,
իմ տունդարձի ճանապարհ:

ՀԱՅՐԵՆԻ ՕՋԱԽ

Մեր տոհմածառի
Գոյության վկա՝
Հայրենի օջախ,
Իմ նախնիների,
Իմ և իմ որդու
Անաղարտ պատիվ,
Քո ամեն քարը՝
Կարոտով օծված
Բեկորն իմ սրտի,
Քո ծուխն ինձ համար՝
Կապույտ արահետ,
Որ տանում է իմ
Սերը ձուլելու
Տիեզերական
Հավերժության հետ…

ՄԵՐ ՀԱՆԴԵՐՈՒՄ ՄՆԱՑԻՆ

Իմ հույզերի երամները
Մեր հանդերում մնացին,
Սեր ու կարոտ դարձան նրանք
Ու մայր հողին փարվեցին:
Ամեն գարնան ձայնակցում են
Արթնացումի երգերին,
Հառնող ծիլի շրթունքներով
Բարին մաղթում հերկերին:
Ամեն ամռան ոսկի արտի
Անուրջներով հիացած՝
Իրենց սերն են նրանց ձուլում,
Որ իրենք ել դառնան հաց:

Ամեն աշնան մրգահասի
Երգ ու հնքով արբեցած՝
Առատ բերքի հետ միասին
Դիմավորում են մարդկանց:
Ամեն ձմռան՝ ջերմությամբ լի

Շրջում են մեր հանդերում,
Ջերմացնում թուփ ու ծառին,
Որ չմրսեն ցրտերում:

Իմ հույսերի երամները
Մեր հանդերում մնացին,
Սեր ու կարոտ դարձած՝ նրանք
Հողի կանչին ձուլվեցին:

ԴԵՌ ՊԻՏԻ ԽՈՍԻ

Մեսրոպ Մաշտոցի
Տառերն են իրավ
Ամենահզոր
Սյուներն հայկական,
Իրենց ուսերին
Պահում են նրանք
Մայրենի լեզվի
Շենքն հսկայական՝
Հայոց ինքնության
Դրոշն հուրհրան
Ու գոյատևման
Ոգին պատմական…
Օ, հայ դպրության
Շենքն այդ լուսակերտ
Դեռ պիտի խոսի
Բյուր դարերի հետ…

ՄԻԱՅՆ ԹԵ…

Փույթ չէ, թե իմ
Ճանապարհ էլ
Անցնի հազար
Սար ու ձորով,
Ինչպես ճամփան
Էլեկտրական
Այս լարերի…
Ախ, միայն թե
Նրանց նման
Ինձ հետ ես էլ
Լույսեր տանեմ
Հեռուներին…

ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ

Սարի կանաչ լանջին
Կանաչ երգեր կային,
Կանաչ հերկեր կային
Սարի կանաչ լանջին:
Ահեղ կռիվ եղավ…
Արնոտ հետքեր կային,
Ցավոտ վերքեր կային,
Սարի կանաչ լանջին…
Գարուն եկավ նորից…

Կանաչ երգ է հիմա,
Կանաչ հերկն է հիմա
Սարի կանաչ լանջին…

ԵՐԳԸ

Բանաստեղծ-զինվորին

Կյանքի ու մահվան
Ճանապարհներին
Երգը քեզ ազնիվ
Մի ընկեր դարձավ,
Քեզ հետ մասնակցեց
Բոլոր մարտերին,
Քեզ հետ և՛ տխրեց,
Ե՛վ ուրախացավ,
Քեզ հետ արևոտ
Բարձունքներ առավ.
Ազատ ճախրելով
Դիրքերի վրա՝
Կյանքի հուր տվեց
Զինվորին ծարավ,
Սիրո հուր տվեց
Ու կյանքի կրակ…
Երգդ գրեցիր
Ցուրտ խրամատում,
Որտեղի՞ց այսքան
Ջերմություն ու հևք…
Ամոթից՝ դեմքս
Քրտինքն է պատում,
Որ չունեմ ես էլ
Այսպիսի մի երգ…

ՊԱՏԳԱՄ

որդուս՝ Աշոտին

Քո հեռավոր երազի
Կապույտ թևից դու բռնած՝
Առաջ գնա, որդյակ իմ,
Այս ճանապարհով,
Սպասում է քեզ հեռվում
Հեքիաթի պես դյութական
Բախտիդ հովիտը կանաչ՝
Օծված արևով…
Քո մաքառման ճամփեքին
Նախ՝ հավատա ինքդ քեզ,
Ապա հավատ ներշնչիր
Դու ընկերներիդ,
Թող քայլերդ միշտ կյանքում,
Լինեն հաստատ ու շիտակ,
Որ շատերը հավատան
Ոտնահետքերիդ…

ԳԱՆՁԱՍԱՐ

Գանձասար, ոգու
Եվ հոգու ամրոց,
Դու հին Արցախի
Աչքը մշտարթուն,
Սյունյաց աշխարհի
Հոգևոր դպրոց,
Քաջ արցախցու
Անառ սրբատուն:
Խրոխտ Մռովի
Հայացքի ներքո
Բազմած հինավուրց
Վանքի բարձունքին՝
Քո սուրբ վեմերի
Վեհափառ երգով
Մեր պատմությունն ես
Պատմում Գալիքին…

ՆՐԱՆՑՈՎ Է ՄՆԱՅՈՒՆ

Իմ հին այգու
Հին ծառերի
Չոր բներն են
Մնացել,
Սակայն նրանց
Արմատներից
Նոր շիվեր են
Բարձրացել,
Ես նայում եմ
Այդ շիվերին,
Նրանց տեսքով
Հիանում:
Նրանցով է
Այգիս ջահել,
Նրանցով է
Մնայուն…

ԳՅՈՒՂԻՑ Է ԳԱԼԻՍ

Վաղ լուսաբացին
Քնից զարթնելս,
Հավատով դեպի
Երկինք նայելս,
Հանդերի կանաչ
Բախտով ապրելս
Գյուղից է գալիս…

Գյուղից է գալիս
Ողջ էությունս,
Հողի մշակին
Նմանությունս,
Սերմնացանի լուռ
Համբերությունս
Գյուղից է գալիս…

ԵՍ ՉԵՄ ԿՇՏԱՑԵԼ

Հայրենի գյուղից ես չեմ կշտացել.
Սիրտս թողել եմ նրա կրծքի տակ,
Որ երգի այնտեղ ոնց աղբյուր հստակ,
Հայրենի գյուղից ես չեմ կշտացել:

Մեր հին օջախից ես չեմ կշտացել.
Դեռ տաքանում եմ նրա ջերմությամբ,
Հմայվում նրա անաղարտությամբ,
Մեր հին օջախից ես չեմ կշտացել:

Աչքերս նրա քարերն է թացել,
Երբ հայրս դաժան կռվից չդարձավ
Եվ իմ հոր պատվին կանգնած հուշարձան՝
Մեր սուրբ օջախից ես չեմ կշտացել:

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Ի՛մ և մայր հողի մտերմությունը
Աննկուն լեռան ամրություն ունի,
Սիրով է թրծված այդ ամրությունը
Ջերմ հայացքի տակ մեր սեգ լեռների:

Ուր էլ եղել եմ կյանքիս ճամփեքին՝
Հարազատ մոր պես ինձ գիրկն է կանչել,
Մայրական սիրով շոյել իմ հոգին,
Եվ նորից բախտիս ծառն է կանաչել…

Ի՛մ և մայր հողի մտերմությունը,
Ինչ էլ որ լինի՝ չի մարի երբեք,
Քանզի կապված է հավերժությանը,
Որպես անկաշառ ու սրտաբուխ երգ…

ԹՈՂ ԿԱՊՈՒՅՏ ՄՆԱ…

Սևանը միայն
Զարդ չէ բնության –
Ճակատագիր է
Եվ հպարտություն,
Հայոց աշխարհի
Հավերժ գոյության
Պայծառ վկան է,
Որպես սրբություն…
Թող կապույտ մնա
Աչքը Սևանի,
Որ կապույտ մնա
Աչքն Հայաստանի…

ՔԱՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քարեր, քարեր…
Շնչող քարեր Հայաստանի,

Հայոց երգի, նվագի հետ,
Հնչող քարեր Հայաստանի,
Հայ տարագիր որդիներին
Կանչող քարեր Հայաստանի,
Ժայռից ամուր, բայց ջերմ սիրուց
Հալչող քարեր Հայաստանի…

ՓՈՒՅԹ ՉԷ

Ամենաքաղցր
Պահը ինձ համար
Երգիս ծննդյան
Պահն է լուսավետ,
Հոգիս լցվում է
Աստղերով անմար,
Մրցում է սերս
Վառ աստղերի հետ…
Օ, փույթ չէ, թե ես՝
Անքուն ու համառ՝
Օրեր սպառեմ
Այդ պահի համար…

ԻՄ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Իմ առավոտն այն
Ջինջ առավոտն է,
Որի բարևից
Բյուր ծաղիկներ են
Ժպտում խանդակաթ
Ծառերի դեմքին…
Իմ միջօրեն այն
Հուր միջօրեն է,
Որի հրակեզ
Հայացքի միջով
Քաղցրության հյութ է
Ներարկվում մրգին…
Իմ իրիկունն այն
Լուրթ իրիկունն է,
Որ առատության
Երգը շուրթերին՝
Բերք ու բարիք է
Տանում ամենքին…

ԹՈՒՓԸ

Ախ, այն թուփը,
Փոքրիկ թուփը
Աչքիս այնքան
Մեծացավ,
Երբ որ նրա
Տաքուկ գիրկը
Մի թռչնակի
Բույն դարձավ…

ԻՆՁ ԹՎՈՒՄ Է

Հողի սիրով արբած
Ու հողի պես բարի՝
Սերմնացան ես եղել,
Իմ սիրելի հայրիկ…
Հողի համար թեև
Ընկար ահեղ մարտում,
Բայց ինձ թվում է դեռ
Սերմ ես ցանում հանդում…

***
Ժամանակը
Չի խնայում
Լեռներին անգամ.
Մեկ էլ տեսար՝
Լեռան կրծքից
Ժայռերը ընկան…
Ժամանակի
Համար ներման
Հյուլեներ չկան…
Տեսնես՝ որտե՞ղ
Անժամանակ…
Ժամանակներ կան…

ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Մանկությունից եմ տարվել
Քո <<երգեր ու վերքեր>>-ով,
Քեզ պես ես էլ եմ սիրել
Տանջված սրտի երգ ու վերք…
Երջանիկ եմ, որ կյանքում
Հանդիպել եմ քեզ, Վարպետ,
Հանդիպումն այդ ինձ համար
Դարձել է մի հուզիչ երգ:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՐԵԿՈ

Շատ ես սիրտս հմայել, երևանյան երեկո,
Ոչինչ ինձ չես խնայել, երևանյան երեկո:
Փողոցում, թե պուրակում՝ վառ ժպիտը քո դեմքին՝
Լույս աչքով ես նայել ինձ, երևանյան երեկո:
Պար է բռնել իմ հոգին քո բարության շոյանքից,
Ի՞նչ երգ գրեմ քեզ վայել, երևանյան երեկո:

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ

Ամեն անգամ, երբ ասում եմ՝
Ես գնում եմ Երևան –
Ինձ նայում են երանությամբ
Ծանոթ, ընկեր, հարևան:
Նրանց պայծառ հայացքներում
Երևանն եմ տեսնում ես՝
Հեքիաթային իր գույներով,

Խոյանքներով հոյատես:

Եվ իմ սիրտը թև է առնում,
Որ շուտ հասնեմ Երևան,
Իմ հոգու մեջ տանեմ նա՛և
Ծանոթ, ընկեր, հարևան:

ԹԱՆԿ Է ԻՆՁ ՀԱՄԱՐ

Իմ կանաչ-կանաչ
Հայրենի արտին
Ես չեմ խնայել
Եռանդս անմար,
Քրտինք եմ թափել
Կաթիլ առ կաթիլ
Ամեն հատիկի
Ու հասկի համար
Ահա թե ինչու
Թանկ է ինձ այսօր
Այդ արդար հացի
Ամեն մի նշխար…

ԻՆՉՈ՞Ի Է ԶՈՒԼԱԼ

– Ինչո՞ւ է զուլալ
Քո ջուրը այդքան,
Աղբյուր լեռնային…
– Խորն է ակունքս
Եվ քարեր շատ կան
Իմ ճանապարհին…

ՕՐՀՆԻՐ ԻՆՁ, ՄԱՅՐԻԿ

Օրհնիր ինձ, մայրի՛կ,
Օրհնանքդ հույսն է
Ճակատագրիս,
Բախտիս հավատն է
Ու լույսը ճամփիս…
Օրհնիր ինձ, մայրի՛կ,
Անցնեմ մաքառման
Ուղին դժվարին,
Որով անցել են
Արդարն ու Բարին…
Օրհնիր ինձ, անգին,
Ես հավատում եմ
Լոկ քո օրհնանքին…

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Երազ տեսա այս գիշեր.
Եկել էիր դու կռվից,
Պատմում էիր հուր հուշեր
Կերչի ահեղ մարտերից:

Լսում էի ակնապիշ
Քո զրույցը սրտաբուխ,
Կարծում էի, թե ընդմիշտ
Հա՛յր իմ, տուն ես եկել դու:

Ավա՜ղ, լույսը չբացված՝
Երազիս հետ չքացար…
Պատերազմը ավարտվեց,
Սակայն դու տուն չդարձար:

Բայց այսօր, երբ երկնքում
Արեգակն է ջերմ ժպտում՝
Նրա պայծառ հայացքում
Քո լույս անունն եմ կարդում:

ԶՐԻ ՃԱՄՓԱՆ

Ես սիրում եմ
Զրի ճամփան.
Արարումի
Երգը շուրթին՝
Շրջանցելով
Քար ու կապան,
Խինդ է տանում
Հանդ ու արտին:
Գոյատևման
Հնք ու խոյանք,
Շունչ է տալիս
Ծառ ու թփին,
Մով հայացքում
Լուսե խայտանք՝
Լույս է սփռում
Մարդու ճամփին…
Թող ես քայլեմ
Զրի ճամփով,
Որ երկնում է
Գարնան երգեր,
Եվ նրա պես
Ամեն քայլով
Կյանքում թողնեմ
Կանաչ հետքեր…

***
Թիթեռ լինեի,
Բայց թիթեռի պես
Լույսի թևերին
Ապրեի ոչ թե
Լոկ մի հատիկ օր,
Այլ՝ հազար տարի
Եվ թիթեռի պես՝
Իմ ամբողջ կյանքում
Մնայի լույսին
Միշտ հավատարիմ…

ՍԱՀՅԱՆԱԿԱՆ

Կյանքիս արտից
Լորս թռավ,
Լորիս թևին՝
Օրս թռավ,
Իմ երազի
Քարափներից՝
Լույսիս շողը
Զորս թռավ…

ԿՍԿԻԾ ԵՎ ԺՊԻՏ

Երբ պտուղն արդեն
Իր աչքն է բացում,
Ծաղկի թերթերը
Թափվում են հողին,
Ծաղկաթերթերի
Մահին անտարբեր՝
Պտուղն է ժպտում
Արևի շողին…

ՆՎԻՐՈՒՄ

Կնոջս՝ Արևին

1

Կյանքի աստղային
Անհունության մեջ
Վառվում է պայծառ
Աստղն իմ սիրո,
Քո գոյությամբ է
Նա մնում անշեջ,
Փայլում քո հոգու
Անմար լույսերով…
Դու նրա հույսը
Եղիր, սիրելիս,
Լույսի անսպառ
Աղբյուրը մնա,
Որ բախտիդ ուղին
Լուսավորելիս
Ուրիշ աստղերի
Գերին չդառնա…

2

Իմ երգի տողին
Հույզ ես նվիրել՝
Հույզի աչքով եմ
Նայում աչքերիդ:
Իմ մտքի շողին
Լույս ես նվիրել՝
Լույսի աչքով եմ
Նայում աչքերիդ:
Իմ սրտի դողին
Հույս ես նվիրել՝

Հույսի աչքով եմ
Նայում աչքերիդ:

ՊԱՏԱՍԽԱՆ

Հովն ասաց ծաղկին.
– Թե ես չլինեմ՝
Ո՞վ կտանի քո
Բույրը ամեն տեղ,
Եվ ո՞վ կգովի
Հանդում ու սարում
Քո տեսքը շքեղ…
Ու թափառական
Հովի ականջին
Այսպես շշնջաց
Ծաղիկը խոնարհ.
– Լավ է ես այսպես
Անանուն մնամ,
Քան թե քո գովքով
Տեղս իմանան…

***

Դու մի զարմանա, որ ես քայլում եմ
Այս առապարով.
Ես ինձ գտնելու հույսով եմ անցնում
Նեղ ճանապարհով…
Եվ գիտեմ, որ ես ինձ կհանդիպեմ
Այն խաչմերուկում,
Ուր որոնողն ու գտնողն են իրար
Մի օր հանդիպում:

***

Որոնումների մեջ եմ անդադար,
Զգտում եմ վեհին ու կատարյալին,
Ուղենիշ է ինձ հավատս անմար,
Որպես լուսաստղ իմ ճանապարհին…
Ինձ որոնելու համար, բարեկամ,
Երգի կարոտը պահիր քո հոգում.
Նա քեզ կասի իմ հասցեն իսկական,
Որ գրված է իմ ամեն լավ երգում:

ՎՇՏԱՆՈՒՄ Է ՍԻՐՏՍ

Ախ, այնպես է վշտանում
Իմ սիրտը, հող իմ,
Երբ քո գրկում աճում են
Փուշ ու մոլախոտ,
Եվ մենակ չեմ կարենում
Ես նրանց հաղթել,
Թեև անդուլ բանում են,
Հոգնում ձեռ ու ոտ:
Լոկ մնում է իմանալ,
Թե ո՛վ է անվերջ
Ցանում հունդերն անքանակ

Փուշ-մոլախոտի,
Ուզում ձեռքերս դնել
Կապանքների մեջ
Եվ իրեն էլ օրերով
Թողնել անոթի…

ԽՈՐՀՈՒՄ ԵՄ

Ես քեզ սիրում էի
Ասպետական սիրով,
Դու վանեցիր սերս
Այնպե՛ս հեշտ ու թեթև,
Ավերեցիր սիրտս
Քո մեղկ <<ես>>-ի հրով,
Թևավորված էի՝
Ինձ դարձրիր անթև…
Տարիներ են անցել…
Ու խորհում եմ հիմա,
Թե ինչո՛ւ եմ տարվել
Քո արտաքին տեսքով,
Ախ, երբ սիրտդ դատարկ
Անոթի է նման,
Տառապում է հոգիդ
Քաղքենիական վազքով…

ՄԻ ՎՀԱՏՎԻՐ

Քո տեղն այս պատին
Պիտի լիներ, քար,
Սակայն պատի տակ
Ընկած ես վհատ.
Ախ, երևի քեզ
Նկատող չկար
Եվ մնացել ես
Դու այդպես անհայտ…
Բայց մի վհատվիր.
Գեղեցիկ մի օր
Վարպետի աչքը
Քեզ կնկատի,
Եվ այդ օրվանից
Տեսքով լուսավոր
Կդառնաս զարդը
Շենքի ճակատի…

ՋԵՐՄԱՑՐՈՒ ԻՄ ՀՈԳԻՆ

Ջերմացրու իմ հոգին
Քո հոգու հրով.
Ես կհալչեմ ձյունի պես
Հանուն քո սիրո,
Եվ իմ ամեն մի կաթիլ
Ծաղիկ կդառնա,
Ու կարբենաս, սիրելի՛ս,
Իմ ծաղկաբույրով…

ՃԱՆԱՊԱՐՀՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԸ

Հազար ու մի
Հարվածների
Դիմանում է
Ճանապարհը
Եվ լռությամբ,
Եվ անտրտունջ
Առաջ տանում
Քարավանը,
Բայց երբ մի քիչ
Հարթ չի լինում,
Լայն չի լինում
Ճանապարհը՝
Տրտնջում է,
Չի համբերում
Եվ չի ներում
Քարավանը…

ԼԵՌԱՆ ԿԱՆՉՈՎ

Լեռների մեջ
Ծնված իմ երգ՝
Արբած բույրով
Ծաղիկների,
Ծաղկին մահից
Փրկող իմ ձեռք,
Դու զորավիգ՝
Այսօրվա և գալիքների:
Լեռան կյանքով
Ապրող իմ երգ,
Լեռան նման
Հպարտ ու վեհ,
Արծիվներին
Դու թև ու հևք,
Մոլոր հավքին՝
Հույս-ապավեն:
Լեռան բախտին
Կապված իմ երգ՝
Թրծված հողմի,
Տապի շնչով,
Թե հարկ լինի
Դու նաև՝ զենք՝
Միշտ մարտունակ
Լեռան կանչով…

ՈՒՇԱՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմա եմ զգում,
Որ դու ես եղել
Սրտիս մտերիմ
Էակը, անգին,
Եվ ես իզուր եմ

Քեզ մենակ թողել
Մեր ժամադրման
Վայրի եզերքին:
Զգում եմ, որ այդ
Զգացումը թանկ
Իմ պատանության
Ծփանքն է անբիծ,
Ու որպես սիրո
Քաղցր տառապանք,
Այս ուշ տարիքում
Չի խնայում ինձ:

ՏՐԻՈԼԵՏ

Չես սփոփել իմ տառապած հոգին,
Բայց չեմ հեռացել քեզանից տրտում,
Վառ եմ պահել քո սերը իմ սրտում,
Չես սփոփել իմ տառապած հոգին:
Անլուր ես եղել իմ սիրո երգին,
Չեմ տխրել սակայն օրերի երթում…
Չես սփոփել իմ տառապած հոգին,
Բայց չեմ հեռացել քեզանից տրտում…

***
Ախ, մանկան պես
Միամիտ եմ՝
Հավատում եմ՝
Ինչ ասում են,
Չնայած, որ
Հաստատ գիտեմ՝
Դրանով ինձ
Վնասում եմ,
Քիչ է մնում,
Որ հավատամ,
Երբ ինձնից ինձ
Բամբասում են…

***
Կյանքի կանաչ անտառում
Կանաչ ծառ եմ եղել ես,
Կանաչ ձայն եմ թողել ես
Կյանքի կանաչ անտառում,
Բայց տես՝ ծառերը լռում,
Բան չեն ասում այսօր քեզ…
Կյանքի կանաչ անտառում
Կանաչ ծառ եմ եղել ես…

ՈՒՇԱՑԱԾ ՀՈՎԵՐ

Որտե՞ղ էիք, հովեր,
Իմ ուշացած հովեր,
Ես ձեզ սպասել եմ
Կյանքիս միջօրեին,
Երբ տքնանքի տապից

Կրակ էի դառել՝
Հուր ցոլքերս նետած
Բախտիս ճանապարհին…
Օրվա կեսը, ավաղ,
Ես թողել եմ ետև,
Եվ զովության շունչն է
Էությանս տիրել…
Է՛լ ինձ պետք չէ, հովե՛ր,
Ձեր շոյանքը թեթև.
Իմ տարիքը ինքն է
Ինձ զով շոյանք բերել…

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ

Դու ինձ համար լոկ
Ծննդավայր չես՝
Շունչ ու ոգի ես,
Երգերի աղբյուր,
Սրտիս մտերիմ
Կարոտ ու կանչ ես,
Հայրական ժպիտ,
Մայրական համբույր:
Դու ինձ համար լոկ
Գյուղ չես հայրենի՝
Փառք ու պատիվ ես
Կռվում զոհվածի,
Հույս ու հավատ ես
Դու անմարելի՝
Եվ հաղթանակի,
Եվ վերադարձի…
Ահա թե ինչու
Քեզնով աներկյուղ,
Քեզնով հաղթող եմ,
Իմ հայրենի գյուղ…

ՍՊԱՍՈՒՄ

Գիտեմ՝ որտեղ ես
Դու ապաստանում.
Հողի կրծքի տակ,
Երկնքի մովում,
Լեռան ծերպերին,
Առվի շուրթերին,
Բողբոջի սրտում,
Հանդ ու արոտում,
Այնտեղ, ուր կյանքի
Շունչ կա ու հավատ,
Ուր սերն է փթթում
Հազար բույրերով…
Դու երբ ես գալու,
Որ սիրտս վհատ
Շոյես խնդության
Քո համբույրներով…
Վառ երանությամբ

Սպասում եմ քեզ,
Ինչպես ծաղիկն է
Մեղվին սպասում:
Օ, դու իմ սիրո
Ամենալավ երգ՝
Իմ երգապտուղ
Ամենահասուն…

ՄԱՂԻ՛Ր, ԱՆՁՐԵՎ

Հողի կանաչ հավատ,
Հողի երազ անմեռ,
Քո բարիքով առատ՝
Մաղի՛ր, անձրև:
Ծիլը աչքն իր անբիծ
Քո ճամփին է հառել,
Պոկվիր զուլալ ամպից՝
Մաղի՛ր, անձրև:
Առանց ծիլ ու հողի
Քեզ տրված չէ ապրել.
Դու նրանցն ես, մաղի՛ր,
Մաղի՛ր, անձրև:

<<ՀԱՎԱՏԻ ՈԳԻ>> ԳՐՔԻՑ /2004/

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Դու իմ այգաբացի
Ջերմ արևը եղար,
Խլրտաց իմ մեջ
Որպես շոյանք,
Եվ իմ հոգում
Գարնան կանաչ ծիլեր ելան
Ու խոստացան բազում
Հնք ու խոյանք:
Դու իմ միջօրեի
Հուր արևը եղար,
Հասունացավ քեզնով
Սերն իմ սրտի,
Ամռան հացաբույրով
Լցվեց էությունն իմ,
Ու ծփացին բախտիս
Արտերն հուռթի:
Գիտեմ՝ դու կլինես
Եվ հովն իմ իրիկվա՝
Միջօրեից շիկնած
Դեմքս շոյող,
Ես քեզ պարտք եմ հավետ,
Իմ հարազատ, իմ մայր,
Սեր իմ արևաբույր,
Հայրենի հող…

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Ծերացած ծառը
Խորհում է, գիտեմ,
Արմատից ելած
Իր շիվի մասին.
Թե արդյոք, նա էլ
Կկարողանա՞
Կայծակի, շանթի
Զարկին դիմանալ…
Նա կմահանա,
Բայց նրա համար
Կյանք է կրկնակի՝
Այդ բանն իմանալ…

***

Դու մեծացիր
Ու բարձրացիր,
Հասիր մինչև
Կաթնածիր,
Բայց, սիրելիս,
Ստվերը քո
Լույսիս վրա
Մի գցիր:

ԹԵ ԱՄՈՒՐ ՊԱՀԵՆ…

Վառվում է իմ մեջ
Բարձունքի ձգտող
Հուրը հավատիս:
Ոտքերս՝ սովոր,
Ձեռքերս՝ սովոր
Մաքառումների,
Թե ոտքիս տակի
Ժայռաքարերը
Ամուր պահեն ինձ՝
Կարող եմ ելնել
Ամենաբարձր
Լեռը աշխարհի:

***

Իմ կյանքի ծառից
Տերևի նման
Պոկվեցին, թռան
Անմոռաց օրեր,
Սիրտս չի տխրի
Թե որ իմանամ՝
Նորերը կգան
Նրանց փոխարեն:

ՃԱՆԱՊԱՐՀՍ

Ձգվող երգ է,
Ձգվող ձեռք է,
Ու ծով բերք է
Ճանապարհս:

Հույզ է տալիս,
Լույս է տալիս,
Հույս է տալիս
Ճանապարհս:
Եվ տարի է,
Եվ սարի է,
Եվ դարի է
Ճանապարհս:

ԼԻՆԵԼ ԲԱՐԻ

Հեշտ չէ, իրավ,
Լինել բարի,
Ինչպես ծառը
Ճանապարհի,
Որ ամառվա
Ուժեղ տապին՝
Զովը տված
Այրվող տափին՝
Քրտնում է տաք
Արևի տակ:
Հեշտ չէ, իրավ,
Լինել բարի,
Արևի պես,
Անմարելի,
Որ արարման
Օրից ի վեր
Բարությունն է
Տալիս նվեր
Աշխարհներին
Ու դարերին…

ԼԵՌՆԵՐԻ ԵՐԳԸ

Ձեր երգը, լեռնե՛ր,
Երգն է լռության,
Վառվող անուրջներ
Հավիտենության
Ու քար լռությամբ
Ձսպված հառաչներ…
Այդ անձայն երգով
Լավ եմ հասկանում
Ձեր սիրտը, լեռնե՛ր:

***
Դու չասացիր՝
Արի ինձ հետ,
Այդպես մենակ
Ո՞ւր ես գնում,
Այս վայրերը
Քեզ անծանոթ,
Ճամփեքն օտար,
Ձուր ես գնում:
…Ու երբ անցնեմ

Ես քո մոտով.
Չասես՝ ինչո՞ւ
Լուռ ես գնում:

ԶԱՐՄԱՆԱԼԻ Է

Արևի հուրը
Հզոր մի ուժով
Այրում է ժայռի
Շուրթերը խոժոռ…
Քրտնում է ժայռը:
Եվ նրա կրծքին
Մի պաղ աղբյուր է
Զվարթ կարկաչում:
Զարմանալի է,
Թե որտեղից է
Քրտնող ժայրի մեջ
Այդքան սառը ջուր…

***
Տարիքս արդեն
Ավարտին մոտ է,
Բայց սիրտս էլի
Սիրո կարոտ է,
Թեկուզ աշուն է՝
Գարնանահոտ է,
Քեզ համբուրում եմ՝
Մի՞թե ամոթ է…

ՍՈՆԵՏ

Ախր, դու ինչո՞ւ մի քիչ չար չեղար,
Մի քիչ վատ չեղար՝ քեզ չսիրեի,
Այլ դարձար կյանքիս լույսը կենարար
Ինձ և Աստծո համար սիրելի:
Ահա թե ինչու վեհափառն Աստված
Քեզ տարավ իր մոտ՝ սրբազան աշխարհ,
Գո՞ւցե ի վերուստ այդ բախտն է տրված
Տիեզերական կապույտ ճանապարհ:
Ո՞վ չի երազում ճանապարհ այդ թանկ,
Սպասիր, կգամ, որ քայլենք մեկտեղ՝
Աշխարհում թողած մեր կիսատ ճամփան:
Աստծո կամքով ես հեռացել ինձնից,
Եվ Աստված մի օր այնպես կանի, որ
Հավերժության մեջ հանդիպես դու ինձ…

***
Գիշեր լինի, թե ցերեկ,
Ես միշտ ճամփին եմ,
Ժամանակը թե ձի է՝
Նրա թամբին եմ,
Ուր էլ տանի՝ կգնամ:
Ճամփաս անհայտ է.
Լավ է՝ ձին է ինձ տանում.

Հույս ու հավատ է…

***

Կանչում եմ, կանչում,
Արձագանք չկա՝
Եվ խլություն է,
Եվ համրություն է:
Ո՞վ կսփոփի
Իմ սիրտը ցավոտ…

Անտարբերություն,
Անտերություն է:
Մի՞թե վերացան
Սեր ու զգացմունք.
Ավելորդություն,
Հիմարություն է…

***

Օրերն ինչքան էլ
Դավադիր լինեն՝
Կյանքը իր հունով
Առաջ կընթանա,
Գարունը հողին
Գորգեր կհինի,
Առուն կհոսի
Ու կհորդանա,
Իմ հոգում հույսի
Շողեր կվառվեն,
Հոգսերիս բեռը
Կթեթևանա…
Եվ օրերն ինչքան
Դավադիր լինեն՝
Իմ երգը այնքան
Կառնականանա,
Սեգ լեռնաշխարհիս
Վեհափառ կրծքին
Հավերժ ծփացող
Դրոշ կդառնա…

***

Տան մի հենասյուն
Կստացվեր ինձնից,
Սակայն անշնորհք
Վարպետի ձեռքին
Վառելափայտ էլ
Չդարձա կարգին…

***

Հասու չես եղել
Իմ տառապանքին,
Կյանքս քեզ համար՝
Օտար մի հնչյուն,
Հուր չես տվել ինձ
Ձմեռվա բքին,

Ամառվա տապին
Թողել ես անջուր:
Ապրեցի, սակայն,
Հավատով մի վառ,
Մեր սար ու քարի
Կարոտով անշեջ,
Ինչպես հայրենի
Մասրենին համառ՝
Արմատը ձգած
Ժայռի կրծքի մեջ:

***

Հողի հետ է գործդ՝
Քեզ գրիչ են տվել,
Իսկ ես երգ եմ գրում՝
Ինձ բրիչ են տվել,
Դրա համար՝ ոչ իմ
Երգն է կարգին երգվում,
Ոչ էլ հողդ, հողվոր,
Մարդավարի հերկվում:

***

Դարը մեղք չունի,
Որ խառնաշփոթ,
Անօգնական է,
Մարդն է մեղավոր՝
Դարի ոտքի տակ
Արկ ու ական է:

ՀԱՅԵԼԻ

Ծառայել ես դու ինձ
Քանի՛ քանի տարի,
Այսօր ընկար հանկարծ՝
Փշուր-փշուր եղար,
Ես որտեղից գտնեմ
Քեզ պես մի հայելի՝
Ինձ սիրելի այնքան,
Իմ ճաշակին հարմար:
Քեզ հետ անվերադարձ
Պատկերներ տարար,
Արդ՝ փշրվեց քո մեջ
Պատկերս էլ վերջին,
Քեզ ջերմորեն հառած
Իմ հայացքը տարար:
Ո՞նց հավաքեմ նրանք
Փշրանքներիդ միջից:
Առար, տարար քեզ հետ
Ժպիտներս արև,
Ու ես հոգուս մռայլ
Ամպերի մեջ ընկա…
Ախ, թե հետո ուրիշ
Հայելու մեջ նայեմ՝
Նրա մեջ էլ պայծառ

Գոյությունդ կզգամ…
Բայց որտեղի՞ց գտնեմ
Քեզ պես մի հայելի՝
Իմ ճաշակին հարմար,
Այնքա՜ն ինձ սիրելի…

ՉԳԻՏԵՍ

Իմ 60-ամյակին

Ճամփիս մեծ մասը անցել եմ արդեն,
Բայց դու ինձ էլի խորհուրդ ես տալիս,
Որ չեն հանդիպի այլևս վարդեր,
Զգույշ, փշերն են ընդառաջ գալիս:
Սակայն չգիտես, որ վաղուց ի վեր
Հենց փշերն են ինձ կյանքում ուղեկցել,
Այդ փշերն այսօր ինձ համար՝ վարդեր,
Վարդերը, ավաղ, փշեր են դարձել…

***

Կյանքի կիզիչ արևի տակ
Ես ծառի պես չորանում եմ,
Զով տենչալուց արմատներս
Մայր հողի մեջ խորանում են…
Հույսս դու ես, հայրենի հող,
Զորություն տուր էությանս
Աղմկալից այս օրերում
Լսող չկա լռությանս…

***

Դեռ ինչ եմ արել, որ ծերանում եմ,
Ինքս ինձանից լուռ հեռանում եմ
Սիրո խաղերում զուր թերանում եմ
Եվ ամեն խաղում մատնվում պարտության:
Դե, ես ի՞նչ անեմ, որ ծերանում եմ,
Աշնան ճամփեքով լուռ հեռանում եմ,
Բայց գիտեմ՝ ձմռան պաղ բերանում էլ
Կերգեմ իմ սիրո երգն անպարտության…

ԿԱՐԵԿՑԱՆՔ

Առուն ջրեց
Այգին, ապա
Բռնեց արտը
Տանող ճամփան,
Բայց ցամաքեց
Ճամփի կեսին.
Արտը մնաց
Ամպի հույսին…
Ամպը տխրեց
Առվի մահով.
Ջրեց արտը
Արցունքներով…

ՎԱՋԻ ԸՆԾԱՆԵՐԸ

Ողկույզներն են
Շառագունել
Հասունության
Սիրուց հուռթի,
Համակվել է
Խաղողայգին
Զվարթ երգով
Այգեկութի:
Ջանք ու եռանդ
Եվ հույզեր կան
Վազի բերած
Ընծաներում,
Ու կենարար
Հյութ կդառնան
Մեր բարեբեր
Հնձաններում:

***

Խաղողի վազը
Ելնում է դանդաղ
Ողորկ պատն ի վեր
Նորակառույցի,
Եվ թվում է՝ նա
Երախտիքով լի,
Իր խնամողին
Գնում է այցի:

ԴՐԱՆԻՑ Է…

Իմ մանկության օրերին՝
Տառապանքի, դառնության
Վայրագ քամին վրդովեց
Հոգուս ծովակը խաղաղ,
Դրանից է, որ հիմա
Կյանքի թեթև մի քամուց,
Ծառս են լինում ցասումով
Ալիքները նրա պաղ…

***

Ես մի ծառ ունեմ,
Որին սիրում եմ,
Ես մի քար ունեմ,
Որին սիրում եմ,
Ես մի սար ունեմ,
Որին սիրում եմ,
Ես մի դար ունեմ,
Որին սիրում եմ…
Այդ ծառն ու քարը,
Այդ սարն ու դարը
Սուրբ կենսահյութով
Սիրտս սնում են…

***

Օրերն ամեն օր
Նոր երգ են բերում,
Արդար տքնության
Նոր հնք են բերում,
Անհաս բարությամբ
Ու խինդով լեցուն
Հայրենի հողին
Նոր բերք են բերում:

ՍՏՎԵՐ

Արև է՝
Որպես մի
Մտերիմ
Քայլում ես
Դու ինձ հետ,
Ստվեր իմ…
Արև չէ՝
Դու իսկույն
Լքում ինձ,
Ձուլվում ես
Թփերին,
Խոտերին…
Դե, ասա,
Քեզ ինչպե՞ս
Վստահեմ
Իմ կյանքի
Փորձության
Պահերին…

ԲԱՐՁՈՒՆՔԻ ՈՒՂԻՆ

Բարձունքի ուղին
Շատ է դժվարին
Ու շատ է երկար,
Ուժ, համառություն
Ու եռանդ է պետք
Քայլելու համար:
Դու պիտի անցնես
Անանցանելի
Քանի լեռնապար,
Մագլցես դեպի
Լեռները հսկա
Ու ձյունակատար,
Ագահ աչքերով
Կնայի քեզ վիհն
Իր խորությունից,
Սիրտդ կտխրի
Ահավոր ձորի
Խոր լռությունից,
Բայց կմոռանաս
Հոգնածությունդ
Նույն ակնթարթում,
Երբ տեսնես՝ մոտիկ
Բարձունքից բախտիդ

Արևն է ժպտում…

ՈՐՊԵՍ ՆԱԽԵՐԳ

Սիրտս ոնց պողպատ
Ու կյանքը՝ կայծքար,
Անվերջ, անդադար
Բախվում են իրար.
Այդ բախումներից
Ցայտած կայծերն են
Երգերս…

***
Մեր պապենական
Թթենին եմ ես,
Արմատ եմ ձգել
Հայրենի հողում.
Բախտիս արևն ինձ
Ջերմ ու սիրակեզ,
Կապույտ երկնքից
Ժպտում է, շողում:
Անմար հույսերով
Ու հույզերով լի՝
Ինչքան ապրեմ այս
Արևի ներքո,
Նվիրվածությամբ
Իմ նախնիների՝
Հողիս պատիվը
Կպահեմ փառքով…

ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Շուտով գարուն է գալու,
Խինդից առուն է լալու,
Սերս ծփանք է տալու
Առաջվա նման,
Սար ու ձոր եմ շրջելու,
Վարդ, կակաչ եմ փնջելու,
Քեզ ինձ մոտ եմ կանչելու՝
<<Միտքդ>> իմանամ:
Արդյոք, լա՞վն ես խոսելու,
Սրտիս խոսքն ես լսելու,
Թե գալու ես՝ նազելու,
Հոգիս նորից հուզելու,
Ինձ ստիպես՝ վազելու
Պատանու նման:
Թե այդպես ես վարվելու՝
Մինչև վերջ չես այրվելու՝
Լավ է, որ չգաս:
Ես մեր սարն եմ ելնելու՝
Դավանանքին իմ հլու՝
Թե հարկ լինի՝ մեռնելու
Բարձունքում անհաս…

***
Առանց քեզ՝ սիրտս եղած կամ չեղած,
Երբ դու կաս, ասես մի աշխարհ է նա…
Օ, քոնն է սիրտս, սեր իմ, չնայած
Նա իմ կրծքի տակ ընդմիշտ կմնա…

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ

Դու իմ հոգու անդորրություն,
Արևաշող երգ ու տարերք,
Սրտիս նվագ ու խնդություն,
Իմ հայրենի անուշ եզերք:

Ջերմությամբ լի՝ դու մոր օրհնանք,
Ինձ տուն կանչող մայրական ձեռք,
Սիրտդ սրտիդ կապող երակ,
Իմ հայրենի անուշ եզերք:

Դու ինձ համար օդ, ջուր ու հաց,
Մաքառումի հնք ու վայելք,
Քեզնով է միշտ ճակատս բաց,
Իմ հայրենի անուշ եզերք:

***
Շատ բան չուզեցի
Մայր բնությունից.
Մի քիչ հող ու ջուր,
Մի քիչ էլ՝ արև.
Եվ նա չմերժեց…
Ու, երբ ծաղկեցի,
Պտուղներ տվի,
Այնժամ զգացի,
Որ բնությունն ինձ
Քիչ բան չտվեց…

***
Քո քարակոփ
Կրծքին կպած՝
Սակավ խոտեր
Ու քարախոս,
Գլխիդ վրա՝
Գաճաճ թփեր,
Իբրև մի հին,
Անշուք գդակ…
Քարափ, սերդ՝
Իմ կրծքի տակ,
Ես օտարի
Աչքերով չեմ
Տեսքիդ նայում.
Ով ինչ ասի՝
Անհոգ մնա.
Այդպես էլ ես
Ինձ հմայում:

***

Դու ոչ տեր ես,
Ոչ՝ տնօրեն
Եվ ապրում ես
Համեստորեն,
Սակայն ինչո՞ւ
Քեզ նախանձում՝
Նախատում են
Ամեն հարցում,
Գուցե նրա
Համար, որ դու
Ծափ չես զարկում
Ամեն մարդու,
Բայց կանգուն ես
Ժայռի նման
Շանթ ու հողմին
Դեմ հանդիման…

***

Քարից արևի
Համ ու հոտ է գալիս,
Ծառից արևի
Համ ու հոտ է գալիս,
Բարից արևի
Համ ու հոտ է գալիս…
Ես գրկել եմ քարը
Ու սեղմել եմ կրծքիս,
Ես գրկել եմ ծառը
Ու սեղմել եմ կրծքիս,
Ես գրկել եմ բարը
Ու սեղմել եմ կրծքիս,
Ես գրկել եմ… դարը
Ու սեղմել եմ կրծքիս:

***

Քանի այս կյանքում
Շատ կա սրտի փուշ՝
Ես եղել եմ, կամ,
Կմնամ, անշուշտ,
Որ մեկ-մեկ հանեմ
Փուշը սրտերի,
Եվ ազատ ըմպեմ
Բույրը վարդերի:

ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՆՈՋՍ

Ես քեզանից շուտ այս աշխարհ եկա
Եվ տառապեցի մենակությունից,
Աստծո ցանկությամբ ինձ ընկեր եկար
Եվ տառապանքս վանեցիր ինձնից,
Ավաղ, տառապանքն ինձ գտավ վերստին,
Ախ, երբ գնացիր դու այս աշխարհից,
Կորստիդ ցավը տիրեց իմ սրտին
Ու ես կծկվեցի անզորությունից…

Սպասիր, անգին, ես կգամ քեզ մոտ,
Մենակ չես մնա, չես մրսի ցրտում՝
Ես կգամ քեզ մոտ, որ մենք միասին
Ավարտենք կիսատ թողած քո ճամփան
Ու կհասնենք մեր երազած լույսին…

***

Իմ հայրենի գյուղի
Ամեն ծառ ու թփի
Բարեկամն եմ եղել
Եվ ընկերը մոտիկ,
Ու ես այնպես էի
Նրանց հավատարիմ,
Ինչպես ծառն ու թուփը
Իրենց արմատներին…

ԳՈՎՔ ԱՐԵՎԻՆ

Լավ է կաս, արև,
Բոլոր հույսերի
Հույս ու ապավեն,
Հույսի պես ոսկոտ
Հույսի ժապավեն…
Ժպիտդ կանաչ
Ծիլ է ու տերև,
Ալվան ծաղիկ է,
Նեկտար է նաև,
Հայացքդ կյանքի
Գարունն է խնդուն,
Հավերժի երգն է
Խոր և իմաստուն…
Լավ է կաս, արև,
Քո մեջ ապրում է
Բանականության
Ոգին մշտարթուն…
Ամենավսեմ
Կատարելություն,
Ամենալուսե
Հավիտենություն…
Լավ է կաս, արև,
Թե չէ՝ ո՞վ կտա
Ինձ սրտանց բարև…
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ես խոր և ամուր
Արմատով ծառ եմ
Հայրենի հողի
Միրավառ գրկում,
Չար հողմերի դեմ
Անվերջ համառել,
Եվ մնացել եմ
Սարի պես կանգուն:
Եվ պիտի մնամ
Հավերժի վկա,

Ու թող դարերն ինձ
Նայեն ու խորհեն,
Որ Հայոց ծառին
Կործանում չկա
Քանզի Աստվածն է
Նրան տնօրեն…

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1

Վաղվա կանաչ հավատով
Հունդս հանձնել եմ հողիդ,
Հույսս կապել եմ շողիդ
Վաղվա կանաչ հավատով:
Կապրեմ գարնան կարոտով՝
Կըմպեմ հմայքը ցողիդ…
Վաղվա կանաչ հավատով
Հունդս հանձնել եմ հողիդ:

2

Բախտս կապել եմ քեզ հետ,
Ո՞ւր ես գնում, ճանապարհ,
Լուռ մի գնա, ինձ էլ տար,
Բախտս կապել եմ քեզ հետ:
Ունեմ մի նեղ արահետ,
Եղիր նրան դու սատար…
Բախտս կապել եմ քեզ հետ,
Ո՞ւր ես գնում, ճանապարհ:

3

Ճամփիս մեծ մասը ոտքով եմ անցել,
Հույսս՝ սեփական ուժերիս հույսին,
Հայացքս հառած հեռավոր լույսին՝
Ճամփիս մեծ մասը ոտքով եմ անցել:
Եվ հավատս միշտ վառ է մնացել,
Չի գայթակղվել պատրանքներով սին…
Ճամփիս մեծ մասը ոտքով եմ անցել,
Հույսս սեփական ուժերիս հույսին:

4

Ես չեմ շտապել և չեմ շտապում,
Որ ետ չմնամ շտապողներից,
Ինչ արժանի է՝ այն է տրվում ինձ,
Ես չեմ շտապել և չեմ շտապում:
Վերևից Տերն է քայլերս չափում,
Ամեն մի քայլս գնահատում վերից…
Ես չեմ շտապել և չեմ շտապում,
Որ ետ չմնամ շտապողներից:

5

Իմ ճամփան ինչպե՞ս քայլեմ առանց քեզ,
Երբ ամեն քայլս կապված է քեզ հետ,
Ոչ առաջ գնալ կարող եմ, ոչ՝ ետ,
Իմ ճամփան ինչպե՞ս քայլեմ առանց քեզ:

Ավերակվել է սիրտս սիրակեզ,
Թառամել սիրո վարդս բուրավետ…
Իմ ճամփան ինչպե՞ս քայլեմ առանց քեզ,
Երբ ամեն քայլս կապված է քեզ հետ:

6

Թեև քայլելուց հոգնել եմ արդեն,
Բայց և քայլում եմ, քայլում անդադար,
Ես պիտի քայլեմ ճամփան իմ արդար,
Թեև քայլելուց հոգնել եմ արդեն:
Ուզում եմ թողնել ծաղիկ ու վարդեր
Իմ ճամփով եկող սերնդիս համար…
Թեև քայլելուց հոգնել եմ արդեն,
Բայց և քայլում եմ, քայլում անդադար:

7

Վերջին հունձն է՝ ես գնում եմ հանգստի,
Հետո երբ գամ՝ արտս կանաչ կլինի,
Եվ այդ արտում կերգի արտույտը հայրենի,
Վերջին հունձն է՝ ես գնում եմ հանգստի,
Բայց իմ հոգին արդյոք, հանգիստ կնստի՞,
Երբ չիմանա՝ ի՞նչ է դրված սեղանին…
Վերջին հունձն է՝ ես գնում եմ հանգստի,
Հետո երբ գամ՝ արտս դեղնած կլինի:

8

Կյանքս հուսահատ կանչ ու կարոտ էր,
Սրտի արատ էր, հոգու տվայտանք,
Ապարդյուն ճիգ էր, ապարդյուն տքնանք,
Կյանքս հուսահատ կանչ ու կարոտ էր:
Իմ ճամփի նման սերս քարոտ էր,
Եվ բախտս նրան դարձավ քար-կապանք…
Կյանքս հուսահատ կանչ ու կարոտ էր,
Սրտի արատ էր, հոգու տվայտանք…

9

Մի՞թե մենք իրար էլ չենք հանդիպի,
Չար բախտի ձեռքով ինձնից խլված սեր,
Մուժ է ճամփեքիս, չեն վառվում լույսեր,
Մի՞թե մենք իրար էլ չենք հանդիպի:
Հոգիս այրում է հուրը տագնապի,
Աղոտանում են հավատ ու հույսեր…
Մի՞թե մենք իրար էլ չենք հանդիպի,
Չար բախտի ձեռքով ինձնից խլված սեր:

10

Դաժանությամբ լի այն խառն օրերում
Քո բարի հոգու գութը զգացի,
Ու ժայռի նման կանգուն մնացի
Դաժանությամբ լի այն խառն օրերում:
Խորհում եմ, խորհում ու լուռ մտորում,
Մտերիմ չունեմ քեզանից բացի,
Դաժանությամբ լի այն խառն օրերում
Քո բարի հոգու գութը զգացի…

11

Քո անաղմուկ լռությունից
Աղմկում է լռությունս,
Մոտենում է ծերությունս
Քո անաղմուկ լռությունից…
Ա՜խ ե՞րբ պիտի հասկանաս ինձ՝
Հեռանում է էությունս…
Քո անաղմուկ լռությունից
Աղմկում է լռությունս:

12

Խիստ ու կոպիտ հայացքներից վիրավոր է իմ հոգին,
Շոյիր նրան քո մեղմության նուրբ մատներով, սիրելիս,
Մի վարանիր, այդ արարքով չես դառնալու դու գերիս
Խիստ ու կոպիտ հայացքներից վիրավոր է իմ հոգին…
Ա՜խ, այնպես է սիրտս կարոտ քո ջերմ սիրո զգվանքին,
Որ մանկան պես շփոթվում է իր զարկերը զարկելիս…
Խիստ ու կոպիտ հայացքներից վիրավոր է իմ հոգին,
Շոյիր նրան քո մեղմության նուրբ մատներով, սիրելիս:

13

Միշտ հոգուս մեջ դեմքդ լուսեղեն,
Ոնց աստվածուհու սրբազան պատկեր,
Միշտ հոգուս մեջ դեմքդ լուսեղեն:
Երգիս տալիս եմ հանգեր ու վանկեր,
Ինձ համար կյանքում հրաշք ես եղել,
Եվ այլ հրաշքի երթից չեմ ընկել,
Միշտ հոգուս մեջ դեմքդ լուսեղեն,
Ոնց աստվածուհու սրբազան պատկեր:

14

Անպայման կգան օրերը խնդուն,
Ու կապաքինվի իմ սիրտը հիվանդ,
Անպայման կգան օրերը խնդուն,
Կշենանաս դու, իմ հայրենի տուն,
Շուրջդ կբացվեն մանուշակ ու վարդ…
Անպայման կգան օրերը խնդուն,
Ու կապաքինվի իմ սիրտը հիվանդ…

ՈՐՊԵՍ ՈԳՈՒ ՆՇԽԱՐ

Վաղամեռիկ կնոջս

Գիտե՞ս, սեր իմ, որ այս աշխարհ իմ կանչով եկար,
Անուշ ձայնիդ մեղմահնչյուն կարկաչով եկար,
Սիրող սրտի ջերմությունից իմ սրտում ծնված
Կանաչ սիրո գարնանաբույր կանաչով եկար,
Եկար՝ տարվեմ քո մարդկային վեհ գեղեցկությամբ,
Հոգիս գերող մանուշակյա քո համեստությամբ,
Քո էությամբ ողջ հմայքը իմ էության մեջ՝
Սեր իմ, ես քեզ հանդիպեցի՝ լի երանությամբ…
Ախ, ավա՜ղ, մեր հանդիպումը չտևեց երկար.
Մոմի նման աչքիս առաջ հալվեցիր, հանգար,

Բայց քո սերը անմար մնաց իմ հոգու խորքում,
Որպես սրբության վկա, որպես ոգու նշխար…

ՆՐԱ ՀԱՄԱՐ ԵՄ ԱՊՐՈՒՄ

Ասում ես՝ սերը հիվանդություն է.
Այն որոնում է հոգով տկարին,
Վարակում նրա ողջ էությունը
Ու դարձնում նրան իր հլու գերին,
Իսկ ես ասում եմ ճիշտ հակառակը՝
Սերն ազնիվ հոգու առողջությունն է,
Զգացումների մայր զարկերակը,
Սիրողի գանձը և տերությունը…
Սերը ինձ համար Աստծո շնորհն է
Ես այն ամենից վեհն եմ համարում,
Կյանքիս իմաստն ու իմ արև օրն է՝
Նրա համար եմ ապրում աշխարհում…

ՀՈՒՍՈ ՓՈԽԿԱՆՉ

Հոգին նվիրված հույս ու հավատքին,
Իր սուրբ օջախին միշտ հավատարիմ,
Հայացքը հառած դարձի ճամփեքին,
Դեռ սպասում է զինվորի այրին…
Եվ ահա հեռվից ոնց հուսո փոխկանչ՝
Լսվում է ձայնը զոհված զինվորի.
Սպասիր, անգին, ճամփեքով ճանաչ
Քո սերն անպայման ինձ տուն կբերի…

ԹԵ ՔԵԶ ՉՀԱՆԴԻՊԵԻ

Սիրելիս, թե քեզ չհանդիպեի՝
Կյանքս կլիներ մի անիմաստ քայլ,
Մենակության մեջ կտառապեի,
Չէր հմայի ինձ ոչ մի գույն ու փայլ…
Ախ, այնքան է իմ հոգուն մտերիմ
Զգացումը քո լինելության,
Որ թվում է, թե այս մեծ աշխարհն էլ
Քեզ է պարտական իր հավերժությամբ…

ՀԱՎԱՏԱ

Վաղուց ես մտել էությանս մեջ,
Որպես իմ հոգու տերն օրինավոր,
Վառել ես սիրտս սիրով անշեջ,
Եվ ես քո դիմաց դարձել եմ անզոր:
Փույթ չէ, թե կյանքիս աշունն է արդեն,
(Իսկ սերը ե՞րբ է տարիք ճանաչել),
Ես քեզ կբերեմ բուրավետ վարդեր,
Գարնան թարմություն, զարթոնքի կանչեր…
Հավատա, սեր իմ, որ աշնան մեջ էլ
Կարող է սիրո ծառը կանաչել…

ԿՈՒԶԵԻ

Կուզեի՝ երգս լույսի շող լիներ՝
Մտներ սենյակիդ լուսամուտներով,
Համբուրեր դեմքդ սրտիս շուրթերով:
Կուզեի՝ երգս լույսի շող լիներ:
Կուզեի՝ երգս լուսամփոփ լիներ՝
Միրտդ կարդայի նրա լույսի տակ,
Ու մեղմ ժպտար քեզ իմ սերը հստակ:
Կուզեի՝ երգս լուսամփոփ լիներ:
Կուզեի՝ երգս ծաղկեփունջ լիներ,
Առնեի գայի ժամադրության
Ու որպես վկա խոստովանության,
Կուզեի՝ երգս ծաղկեփունջ լիներ:
Կուզեի՝ երգս մի կամուրջ լիներ
Եվ ամուր կապեր մեր սրտերն իրար,
Այն չխորտակեր ոչ մի գետ վարար…
Կուզեի՝ երգս մի կամուրջ լիներ:

ՄԻ ՀՈՒՍԱՀԱՏՎԻՐ

Գաղջ օրերի մշուշից
Դառնացած է սիրտդ, մայր,
Խայթվեց տատասկ ու փշից
Քո Արցախը՝ Սրբավայր:
Վիրավոր է արծիվը
Քիրս ու Մռով սարերում,
Արդ ուրուրը և ցինն են
Իրենց արծիվ համարում:
Թարթառի լուրթ ջրերին
Թևն է փռվել սև ամպի,
Ահ են բերել ձկներին
Կարիճները քարափի:
Ագռավներն են կռկռում
Ամեն ծառից ու քարից,
Սոխակները անտառում
Կուչ են եկել սարսուռից:
...Դառնացած է սիրտդ, մայր,
Բայց հուսահատ մի լինի.
Ամեն դառնության համար
Կյանքը դեղ-դարման ունի:

ԴԻՄԱՑԻՐ

Գարնան անամպ երկնքից
Արեգակն է ջերմ ժպտում
Նրա քնքուշ շոյանքից
Հողի սիրտն է խլրտում:
Բայց քո հոգու եթերում
Դեռ մութ ամպ կա ձմեռվա,
Այն պաղ շունչ է քեզ բերում
Եվ մրսում ես դու հիմա:
Դիմացիր, մայր Արցախի,
Շուտով արևը անգին
Կգա այդ ամպի հախից՝

Կջերմանա քո հոգին:

ԻՄ ԱՅԳԻՆ

Իմ այգին այնպե՛ս
Խաղաղ է հիմա,
Որ ամաչում է
Ներխուժել քամին՝
Վրդովել հանգիստն
Այգուս ծառերի…
Եվ կապած արծաթ
Գոտին առվակի,
Նրա մեղմ երգի
Հնչյունների տակ՝
Ըմպում է հյութը
Նարինջ-արևի:
Իմ այգին այնպե՛ս
Խաղաղ է հիմա,
Որ թվում է, թե
Խաղաղությունն է
Պտուղներ դառնում
Այգուս ծառերին:

***
Ես միշտ վաղվա լավի հույսով
Հրաժեշտ եմ տալիս օրվան,
Քուն եմ մտնում բիլ երազով
Ու արթնանում կարոտով վառ:
Եվ անցնում է իմ տարիքը
Որպես կյանքի քաղցր նվագ,
Իր հետ տանում ալ ծաղիկն իմ,
Ինձ թողնելով ձյունն իր ճերմակ:

***
Գետն ու քարափը
Ապրում են դարեր
Այդպես կողք-կողքի,
Բայց գետն՝ աղմկող,
Իսկ քարափը՝ լուռ
Հարատևությամբ…
Մեծ է երևի
Կամրջող ուժը
Հարևանության:

***
Գիտեմ, դժվար է
Վերելքի ուղին,
Բայց մի քայլ անգամ
Ես չեմ նահանջում,
Թեև այն հիմա
Արծվի թևեր ու
Առյուծի ուժ է
Ինձնից պահանջում…

***

Երբ իմ վաստակած
Մի կտոր հացը
Կիսել եմ սրտանց
Ընկերոջս հետ,
Կրկնակի չափով
Քաղցրացել է այն,
Կրկնակի չափով
Դարձել բուրավետ…

***

Հավքի տարերքը՝
Երկնքի մովում
Ազատ, համարձակ
Ճախրելն է անվերջ,
Եվ մի տենչ ունի,
Եթե մահանա՝
Մահանա միայն
Իր տարերքի մեջ:

***

Ամեն անգամ՝
Թվում է, թե
Առույգ դեմքով
Մանուկ եմ դեռ,
Դրա համար
Չեմ ցանկանում
Հայելու մեջ
Ես ինձ դիտել:

***

Եկած ձյան վրա
Էլ ձյուն չի գալիս,
Ոտնահետքերս
Չեն ծածկվել ձյունով,
Ինչ լավ է, բալիկ,
Մի լույս կա ճամփիդ՝
Գնա իմ թողած
Ոտնահետքերով…

***

Եվ ծառն աղաչեց՝
Չպոկեն իրեն՝
Չտնկեն նորից
Հողում օտարի.
Առանց մայր հողի
Չի կարող ապրել,
Թեկուզ՝ գրկի մեջ
Դրախտավայրի:

***

Սերդ իմ հոգու
Անմար կրակն է,
Ճամփիս ճրագն է

Անմարելի,
Իմ սրտից ելնող
Քո զարկերակն է,
Հավատի զանգն է
Անլռելի…
Գոհ եմ Արարչից,
Որ նա <<էն գլխից>>
Ինձ է պարգևել
Սերդ անբիծ,
Քանզի լավ գիտի.
Առանց քո սիրո
Շնչահեղձ ձուկ եմ՝
Հանած գետից…

ԻՆՔՍ՝ ԻՆՁ

Տեսնես աշխարհում
Ով ուրախացավ
Եվ ով վշտացավ
Իմ աշխարհ գալով,
Ով կվշտանա,
Ով կուրախանա
Այս լավ աշխարհից
Իմ հեռանալով:

ՀՈԳ ՉԷ

Թեև ծերացած ծառ եմ ես արդեն,
Եվ նվազել է ավյունս նախկին՝
Կանգնել եմ հպարտ չար հողմերի դեմ
Ինչպես հայրենի դարավոր կաղնին:
Թե ինձ հարվածեն կայծակ ու մրրիկ,
Եվ ճյուղատարած տապալվեմ գետնին.
Հոգ չէ՝ ինձ պարտված չեմ համարի՝
Դարձյալ կմնամ հողին հայրենի,
Ու հոգիս ձուլած մայր հողի ոգուն՝
Ընդմիշտ կմնամ անհաղթ ու տոկուն…

***
Անտառի ծառերը երկար են ապրում
Եվ դիմանում են ամեն փոթորկի,
Քանզի մեկ-մեկու թիկունք են ամուր,
Թրծված են հզոր ոգով տարերքի:

***
Ծառիս համար եմ իմ տունը շինել,
Տանս համար եմ իմ ծառը տնկել,
Որ իմ սերը և կարոտը լինեն
Նրանց մտերիմ ու բարի ընկեր,
Եվ իմ մայր հողն զգա, որ իրեն
Իմ ծառն ու տունը ամուր են գրկել:
Ծառիս համար եմ իմ տունը շինել,
Տանս համար եմ իմ ծառը տնկել:

***
Ժամանակների
Ծանր բեռան տակ
Լեռներից հաճախ
Ժայռաքարերն են
Գլորվում ներքև՝
Ընկնում լեռների
Քարե ոտքի տակ,
Սակայն բարձունքում
Մնում են նրանց
Վեհությունը պերճ,
Երգը կապուտակ:

ՀՈՂԻ ԿԱՆՉԸ

Հողը կանչում է, միշտ էլ կանչում է,
Արդյո՞ք բոլորն են լսում այդ կանչը.
Երբեմն իր կանչից նա ամաչում է,
Որ իբր շատ է մեզնից պահանջում:
Բայց ես խոր ցավ եմ զգում իմ հոգում,
Երբ չեն զգում սրբությունը հողի
Եվ նրա կանչին չեն արձագանքում,
Որպես սուրբ կանչին իրենց ծնողի:

ՀՈՒՅՍԻ ՇՈՂԵՐ ԿԱՆ

Հույսի շողեր կան սարալանջերին
Օրը կբացվի գարնան համբույրով,
Շունչ-ոգի կտա ուրց կակաչներին,
Եվ շուրջ բոլորը կլցնի բույրով,
Ես մեր սարերը կելնեմ մանկացած,
Կարբենամ ծաղկանց անուշ բուրմունքով,
Կժպտան տխուր պահերս անցած,
Սիրտս կլցվի սիրո արբունքով…
Հույսի շողեր կան սարալանջերին.
Ես մեր սարերը կելնեմ հավատով,
Չէ՞որ փոխկանչ կա հոգուս կանչերին
Որ սպասում է ինձ վառ կարոտով…

ՊԱՐԶ ՈՒ ՇԻՏԱԿ

Մաքուր խղճով եմ ես տնից ելնում
Ու մաքուր խղճով վերադառնում տուն,
Քանզի իմ կյանքի ջինջ հորիզոնում
Արդար արևն է ամեն օր ժպտում:
Նա ճշմարտության շողեր է սփռում
Վառ երազների ճանապարհներին,
Այդ շողերով եմ ես հոգիս կռում,
Հավատով նայում հեռաստաններին:
Անցել եմ հազար դար ու խութերով,
Ուր էլ եղել եմ այս արևի տակ,
Դժվարությունները հաղթահարելով,
Հոգիս պահել եմ ես պարզ ու շիտակ:

ԱՐՑԱԽ

Հպարտ եմ ես քո
Անունով, Արցախ,
Անուն, որ լույսի
Պայծառ շողի պես
Ժամանակների
Մշուշը ճեղքել
Եվ հասել է մեզ,
Որ ժպտա այսօր
Հայացքով հայի
Ու ազնիվ մարդկանց
Սիրտը հմայի…
Ես հպարտ եմ քո
Անունով, Արցախ,
Մեր վեհ պայքարի
Իմ քաջ Ֆիդայի:

ԵՍ ԱՐՑԱԽՑԻ ԵՄ

Այս ճանապարհից
Ես դառնողը չեմ,
Ոչ էլ՝ քայլողը
Նպատակազուրկ,
Թող չար ուժերն ինձ
Վախկոտ չկոչեն
Ու չասեն կյանքում
Չունեմ ոչ մի կուռք:
Լավ գիտեմ՝ ուր եմ
Գնում և ինչու՝
Հայացքս հառած
Լուրթ հեռաստանին
Այսօր ես վաղվա
Թարմ օդն եմ շնչում՝
Էությամբ ձուլված
Մայր Հայաստանին:
Ոչ ոք չի կարող
Ինձ ծնկի բերել,
Ամեն մի քայլում
Արդարացի եմ,
Իմ կողն ամուր է
Ժայռի կողի պես,
Դրա համար էլ
Ես արցախցի եմ:

ԵՐԲ ԴՈՒ ԻՆՁ ՀԵՏ ԵՍ

Երբ դու ինձ հետ ես՝
Քայլելը այնպես
Հեշտ է, անկաշկանդ,
Տխուր պահերս
Չքվում են անտես,
Արգելք ու կապան
Դառնում քարուքանդ:

Երբ դու ինձ հետ ես՝
Մաքառման երգն է
Սիրտս համակում՝
Ոգի եմ առնում՝
Դառնում հեռատես,
Չարի դեմ կռվում
Ու հաղթանակում:

Երբ դու ինձ հետ ես՝
Իմ հեռուն այնքան
Մոտենում է ինձ,
Որ անզեն աչքով
Պարզ տեսնում եմ ես
Իմ երազների
Ծորումն աստղերից…

<<**ՀԱՎԱՏ ԵՎ ՍԵՐ**>> **ԳՐՔԻՑ /2006/**

ԺԱՄԱՆԱԿԸ

Ժամանակը խենթ զամբիկ է՝ արբունքի մեջ տառապող,
Արգելքները նրա առաջ խոնարհվում են անտրտունջ,
Խելակորույս, սանձակոտոր սլանում է նա թափով,
Եվ աշխարհը նրան հլու հետևում է լուռ ու մունջ:
Ով ճարպիկ է՝ ցատկել է ու նստել նրա պիրկ մեջքին,
Իսկ ով մի քիչ խոնարհ-խեղճ է՝ ոչինչ անել չի կարող,
Ոնց ձիաճանճ՝ մի կերպ կպած մերթ հետույքին, մերթ՝ պոչին,
Քարշ է գալիս աննպատակ, անպաշտպան ու սրտադող:
Ժամանակը խենթ զամբիկ է կամ թե՝ հուժկու հովատակ,
Թե որ չեղար թամբի վրա, զգույշ, կընկնես ոտնատակ:

***

Ես սեր եմ երգել ամեն ժամանակ՝
Թե ուրախ և թե տխուր պահերին
Ու չեմ զգացել ինձ խեղճ ու մենակ
Իմ մաքառումի ճանապարհներին:
Ինձ տվել է նա հավատ ու ոգի՝
Լինեմ իր նման հպարտ ու անհաղթ,
Եվ ինչպես վսեմ խորհուրդը կյանքի՝
Պահեմ իմ սրտում վեհ ու անաղարտ…
Ես սեր եմ երգել, երգում եմ, կերգեմ՝
Ոնց իմ գոյության ակունքը հստակ,
Եվ դրանով իմ մահը կհերքեմ՝
Ապրելով հավետ այս արևի տակ:

***

Կյանքս տրված է այս ժամանակին,
Ինչ ցանկանում է՝ այն էլ անում է.
Մերթ բարձ է դնում իմ գլխատակին,
Մերթ գլխատակիս բարձը հանում է,
Մերթ ոնց հարազատ, ձեռքիցս բռնած՝
Ինձ տանում է նա դեպի բարձունքը,
Մերթ էլ՝ զայրալից հայացքն ինձ հառած,
Քթիս տակ պահում ամուր բռունցքը,
Մերթ դրվատում է արած-թողածս՝
Սրտանց մաղթելով ինձ բարի ճամփա,
Մերթ ափսոսում է կերած-խմածս՝
Ինձ համարելով անհոգ ու անբան…
Դե ինչ, այսպիսին է մեր ժամանակը՝
մեկ խիստ, մեկ բարի.
Հանկարծ փոխում է պարեղանակը,
Թե տղամարդ ես՝ անսխալ պարիր…

ԿԱԾԱՆԸ

Մինչև աղբյուրը սարի
Փոքրիկ մի կածան
Ինձ անկաշառ ու բարի
Ուղեկցող դարձավ:
Եվ աղբյուրի պաղ ջրով
Սիրտս հովացած՝

Նորից ես նույն կածանով
Սարից իջա ցած…
Ու խորհում եմ՝ քանի կա
Փոքրիկ կածանն այդ,
Սարի աղբյուրը երբեք
Չի մնա անհայտ:

ԵՍ Ի՞ՆՉ ԵՄ ԱՐԵԼ…

Լեռների համար ես
Վառվել ու մարում եմ,
Ախ, տեսնես իմ մասին
Հոգո՞ւմ են լեռները…
Հ.Սահյան

Ես աճեցի անդավ
Այս լեռների գրկում,
Քիրսը և Մռավը
Եղան ինձ հենարան,
Երբ խելահեղ ուժով
Կայծակն էր մտրակում՝
Հարվածն առնում էին
Նրանք իրենց վրա,
Իսկ փոթորկի պահին,
Երբ առվակ ու գետակ՝
Լքած ափերն իրենց,
Ահով փախչում էին,
Հպարտորեն կանգնած
Ահեղ տարափի տակ՝
Հեղհեղատից նրանք
Ինձ պաշտպանում էին…
Եվ նրանցից շոյված,
Լուռ խորհում եմ հիմա՝
Իսկ ես ի՞նչ եմ արել
Այս լեռների համար…

ՏԱՐԻՆԵՐՍ

Տարիներս եղան մռայլ ու անտարբեր
Եվ թողեցին ճամփիս անանց մշուշ ու մեգ,
Արեգակիս շուրջը կուտակվեցին ամպեր,
Վեր չհառնեց, ավաղ, իղձի շիվս երբեք:
Նրանց հայացքներից խորթություն է ծորել
Ու թափանցել հոգուս ամեն ծալք ու բջիջ,
Ամեն քայլիս դիմաց մի խոր փոս են փորել,
Իրենց բարիքներից ինձ չեն տվել ոչինչ…
Պարտական եմ ես քեզ, օ՜, զորություն կամքիս,
Որ անսասան կանգնել արգելքների առաջ՝
Ինձ փրկել ես բազում ահից ու փորձանքից
Եվ տանում ես դու ինձ իմ հովիտը կանաչ:

***

Չեմ կարող հաշտվել ձմռան բքի հետ.
Ավերեց, տարավ տանիք ու թիթեղ,
Հառնեց իմ ճամփին հսկա սառցաբերդ

Եվ ինձ չմնաց ոչ մի տաքուկ տեղ:

Չեմ կարող հաշտվել գարնան գետի հետ.
Ձյան հալոցքներից դարձած խելագար՝
Պոկեց ծառերս ու տարավ անհետ՝
Իմ այգում թողած լոկ ավազ ու քար:

Չեմ կարող հաշտվել ամռան տապի հետ.
Այրեց-խորովեց արտերս կանաչ,
Հրի փոխարկեց հովս սիրավետ,
Աղբյուրիս շուրթին չմնաց կարկաչ:

Չեմ կարող հաշտվել աշնան քամու հետ.
Ճանկեց իմ ծառի տերևն էլ վերջին,
Եվ ծառս թողած մերկ ու տխրադեմ՝
Զուլվեց մոտալուտ ձմեռվա շնչին:

Չեմ կարող հաշտվել, բայց դիմանում եմ
Ամեն փորձության ու տառապանքի,
Քանզի գիտեմ՝ դա Տերն իմանում է
Եվ ինձ ներարկում հավատի ոգի:

***

Դժվար օրեր եմ ապրում, հիրավի,
Մեգ-մշուշով է պատել իմ ուղին,
Այնքա՛ն եմ կարոտ բարուն ու լավին,
Այնպե՛ս եմ տենչում արևի շողին:
Անտարբերության պաղ հայացքի տակ
Անանց ցավով է հեծում իմ հոգին,
Սիրտս չի շոյում սիրո շունչը տաք,
Բայց այնպես վառ է հավատիս ոգին,
Որ մոռանում եմ ամեն ցավ ու վիշտ
Եվ ամուր կանգնում եմ դիրքերում միշտ:

***

Ախ, այնպես եմ հիասթափվել
Միապաղաղ այս օրերից,
Որ թվում է՝ ամայության
Մերկությունն է պաշարել ինձ
Ու կարծես նա անտես ձեռքով
Խեղդամահ է անում հոգիս…
Լավ է դու կաս, ու ձայնը քո
Միշտ արթուն է պահում ոգիս…
Այս օրերի սառը շնչից
Սարսռում են դաշտ, հանդ ու ձոր,
Ու փրկելու համար նրանց
Քո ուժն է պետք, Ամենազոր:

ԹԵԵՎ ԳԻՏԵՆՔ

Ես գալիս եմ հեռուներից,
Դու գնում ես հեռուն,
Շատ տկար եմ զգում ես ինձ,
Քո ավյունն է եռում…
Կյանքը՝ ճամփա, մենք ճամփորդ ենք

Արձակ հեռաստանում,
Ճանապարհն ինձ բերում է ետ,
Քեզ առաջ է տանում…
Ես գալիս եմ հեռուներից,
Դու հեռուն ես գնում,
Թեև գիտենք՝ մեր քայլերից
Լոկ փոշին է մնում…

***

Ի՜նչ վատ է՝ խոր ձորերում
Գետերն էլ չեն շառաչում,
Կանաչ դաշտ ու սարերում
Հորթերն էլ չեն բառաչում,
Անտառներից կուսական
Հավք ու եղնիկ հեռացան,
Զով հանդերում էլ չկա
Հողվորների անուշ ձայն,
Այգու մեռնող ծառերին
Ագռավներն են կոկռում,
Հանդի ամուլ ցելերին
Կաչաղակներն հռհռում…
Ախ, ո՞նց անեմ ես հիմա
Առանց սեր ու կարոտի,
Ո՞ր բժշկի մոտ գնամ՝
Որ ցավերս փարատի…

***

Ծառը ծերացավ,
Իսպառ ամլացավ,
Բայց իր բարությամբ
Մնաց անվարան.
Բերքից կռացած
Հարևան ծառին
Երկար տարիներ
Դարձավ հենարան:

ԺԱՅՌԸ

Ժայռի հոնքի տակ՝
Զարթոնքի հանդես.
Հազար գույներով
Հողն է մայրանում…
Տխրում է ժայռը
Իր բախտից… սակայն
Մայր հողի բախտով
Նա ուրախանում:

***

Հմայված կանաչ իր շրջապատով՝
Անհոգ, անտարբեր աճում է շիվը,
Թեև սնունդ է առնում արմատով,
Չգիտի նրա գինն ու պատիվը,
Բայց մայր արմատի սիրտը դողում է,
Երբ քամուց շիվն իր դիրքը շեղում է:

ՎԱՅՐԻ ՄԱՍՐԵՆԻ

Հոգնաբեկ ճայեր, իջեք ուսերիս,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր…
Ավ. Իսահակյան

Ժայռակողին կպած
Այս հողմածեծ լեռան՝
Քանի՞ տարիներ ես
Դու գլորել ներքև,
Տապն ու հողմը հաճախ
Քո կյանքի դեմ ելան՝
Քեզ ուզեցին իրենց
Ճանկերի մեջ խեղդել…
Վայրի մասրենի,
Չգիտեին նրանք՝
Ժայռի ամրությունն էր
Քո մեջ արմատ ձգել:

ԱՐՑԱԽՅԱՆ ԹԹԵՆԻ

Իմ ծառերի ծառն ես դու, ով արցախյան թթենի
Նախնիներիս հետ ծնված՝ իմ բարեբեր կենաց-ծառ,
Արցախցու վառ պատկերն է հայացքի մեջ քո պայծառ,
Իմ ծառերի ծառն ես դու, ով արցախյան թթենի…
Դարեր կգան՝ կգնան, քեզ մահ-վախճան չի լինի,
Քանզի մահվան կամուրջը հաղթանակով դու անցար…
Իմ ծառերի ծառն ես դու, ով արցախյան թթենի,
Նախնիներիս հետ ծնված՝ իմ բարեբեր կենաց-ծառ:

ՈԳԻՆ

Ոգին իմ հոգու հարստությունն է,
Իմ էությունն է արարչագործված,
Որպես մարդու՝ իմ հպարտությունն է,
Որ իմ պապերից ինձ է ժառանգված:
Այն ինձ վեհություն պարգևող ուժն է,
Եվ արիության ակունքն անապակ,
Տմարդի սիրտը խոցող իմ փուշն է,
Եվ բարու հանդեպ իմ սերն անպարփակ:
Ոգին իմ հոգու աստղ է պայծառ,
Որ խոստանում է ինձ վառ ապագա,
Ճամփիս մշուշն այն անում ցիր ու ցան
Ու բացում է մի լուսեղեն ճամփա:

ՄԻ ԶԱՐՄԱՑԵՔ

Դուք մի զարմացեք ցածր իմ ձայնից.
Կյանքում ես բարձր շատ քիչ եմ խոսել,
Ու չի եղել մարդ՝ չհասկանա ինձ,
Եվ շատ-շատերի սրտերն եմ հուզել,
Սովորությունն այդ ծնվել է ինձ հետ

Եվ օրը-օրին ամրացել իմ մեջ,
Թե փորձեմ բարձր խոսել այսուհետ,
Շինծու կստացվեն խոսք ու ելևէջ…
Դուք մի զարմացեք ցածր իմ ձայնից.
Նույնիսկ խուլ մարդ էլ կհասկանա ինձ…

ԻՆՁ ՉԻ ԼՔԻ ՆԱ

Դեռ մինչև հիմա հոգուս ականջում,
Ինչպես ծղրիդի երգը մեղմանուշ՝
Առաջին սիրո երգն է ղողանջում,
Արթնացնում իմ մեջ հազար ու մի հուշ:
Նա տանում է ինձ հայրենի գյուղի
Բուրմունքով լեցուն գիրկը բնության,
Թարմացնում սիրտս լուրթ շաղ ու ցողի
Արևով օծված քնքուշ զովությամբ:
Ու պատանի եմ վերստին զգում ինձ՝
Վանելով կյանքիս ամեն դառնություն…
Օ՜, թե այդ երգը հեռանա ինձնից
Վրա կհասնի խորը ծերություն…
Բայց գիտեմ՝ երբեք ինձ չի լքի նա.
Իմ մեջ ծնվել է՝ իմ մեջ կմնա:

ԱՆՁՐԵՎԻ ԵՐԳԸ

Անձրևից կյանք են առնում ծիլ ու ծառ,
Ջահելանում են դաշտ, անտառ ու հանդ,
Թե անձրև չգա՝ չկա ծիածան,
Չկա խենթ առու, չկա կանաչ արտ…
Անձրևը երգ է, անձրևը բերք է,
Անձրևը հևք է կանաչ զարթոնքի.
Անձրևի երգով լցվում իմ հոգին,
Եվ ես հավատի աչքով եմ նայում
Մեր հանդին մաղվող անձրևի երգին:

ԽՈՍՔ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ

Թե իմ հավատով հավատաս դու ինձ՝
Չես խանդի երբեք կյանքում ինձ այդպես,
Ինչքան էլ հեռու լինեմ քեզանից՝
Դարձյալ լույս տվող քո աստղն եմ ես…
Գիտցիր, ինձ համար թե չլինես դու՝
Լույսս կմարի՝ խռով աշխարհից,
Չէ՞ որ աշխարհում ամեն մի մարդու
Մի աստղ է տրված անթիվ աստղերից…

Ի՜ՆՉ ԼԱՎ ԱՐԵՑԻՐ

Ի՜նչ լավ արեցիր, որ ետ պահեցիր
Ինձ անդունդ տանող ճանապարհներից,
Եվ լույսս մարող, քունս խանգարող
Իմ աննպատակ թափառումներից:
Ի՜նչ լավ արեցիր, որ դու շոյեցիր
Իմ խաբված հոգին քո նվիրումով

Եվ համեստ ու հեզ մանուշակի պես
Լցրիր իմ սիրտը քո հրապույրով:
Քո մեղմ հայացքից բախտս ժպտաց ինձ
Հավատով նայեց լուրթ հեռուներին…
Ի՜նչ լավ արեցիր, որ ետ պահեցիր
Ինձ կործանարար ճանապարհներից…

ԵՐԳԸ ՃՇՄԱՐՏԻ

Ամենածանր շղթան ես իրավ կկրեմ բազկիս,
Միայն թե ազատ ճախրի եթերում երգը ճշմարտի…
Ամենազորեղ կրակի հրում կվառեմ հոգիս,
Միայն թե անմար իր հրով վառվի երգը ճշմարտի…
Ամենադաժան հարվածը մահվան թող լինի սրտիս,
Միայն թե մարդկանց սրտերում ապրի երգը ճշմարտի:

ԵՐԲ ԴՈՒ ՉԿԱՍ

Հոգիս մերկ է ու տխուր,
Երբ դու չկաս աշխարհում,
Սրտիս մեջ վերքն է մխում,
Երբ դու չկաս աշխարհում,
Սերն օտար է ինձ թվում,
Երբ դու չկաս աշխարհում,
Երգս հեռուն չի թևում,
Երբ դու չկաս աշխարհում,
Գարունս չի կանաչում,
Երբ դու չկաս աշխարհում,
Ինքս ինձ չեմ ճանաչում,
Երբ դու չկաս աշխարհում,
Գոյությունս չեմ զգում,
Երբ դու չկաս աշխարհում,
Կյանքիս զանգը չի զնգում,
Երբ դու չկաս աշխարհում…

ՄԻԱՅՆ ԻՄԸ ՉԵՄ

Իմ գարունները
Եթե ինձ համար
Միայն կանաչեն՝
Ինձ հարկավոր չեն…
Իմ առուները
Եթե իմ այգում
Միայն կարկաչեն՝
Ինձ հարկավոր չեն…
Իմ հեռուները
Եթե ջերմ սիրով
Միայն ինձ կանչեն՝
Ինձ հարկավոր չեն…
Չէ՞որ իմ կյանքի
Դժվար ճամփեքին
Միայն իմը չեմ…

ՍԵՐՄՆԱՑԱՆ

Դու անմարելի մի սուրբ հավատով
Հողին ես հանձնում հունդերը հասուն,
Եվ արարումի կենսախինդ երգով
Գալիք բերքին ես հույսով սպասում:
Բարի սերմնացան, ինձ թվում է թե
Երգիս տողերն ես պահ տալիս հողին,
Որ վաղը կանաչ ծով արտերի պես
Ժպիտ պարգևի հաց արարողին:

***

Վաղը նման է
Չգրված էջի՝
Լույսերի անբիծ
Բույլը երեսին,
Երանի նրան՝
Ով առաջինը
Այդ էջի վրա
Գրել կսկսի:

***

Գետի եզերքին
Նստած մի մանուկ՝
Փախչող ալիքը
Որսալ է ջանում.
Ձեռքը տանում է,
Որ բռնի նրան՝
Նա խաբս է տալիս,
Փախչում անվարան…
Ախ, ես էլ հաճախ
Մանկան պես անհոգ
Փորձում եմ որսալ
Օրերս փախչող…

***

Սլանում է ձայնս աղմուկների միջով
Եվ ջանում է գտնել մի անաղմուկ անկյուն,
Խլանում է ձայնս և իր վերջին շնչով
Թևաթափ հավքի պես մահկանացուն կնքում,
Բայց հավատիս ոգու ամենազոր կանչով
Նա հարություն կառնի անդորրության գրկում:

***

Չկարողացա
Իմ տեղը գտնել
Կյանքի ճամփեքին.
Մենակ ծառ էի,
Կաղնի չունեի
Ես իմ թիկունքին…

ԴՈՒ ԵՎ ԵՍ

Դու լուսաբացի դեմքն ես անաղարտ,
Ես՝ մայրամուտի դեմքը կնճռոտ,
Դու՝ օրվա սկիզբ, ես՝ օրվա ավարտ,
Դու՝ կանաչ խոստում, ես՝ դեղնած տերև,
Դու՝ դալար մի շիվ, ես՝ չորացող ծառ,
Դու՝ նորահունչ լար, ես՝ հեռացող ձայն…

ԳՅՈՒՂԻ ՀԱՆԴԵՐ

Արևաբույր ու բարեբեր
Իմ հայրենի գյուղի հանդեր,
Ձեր գրկի մեջ սերս ծաղկել
Երգիս հունդն է ծլարձակել:
Այժմ էլ իմ ծառը կյանքի
Բերք է տալիս սեր ու երգի,
Քանզի դեռ իր արմատներով
Մնվում է ձեր տաք ավյունով:

ԱՄԵՆԱՋԵՐՄ ԲԱՐԵՎԸ

Օ՜, ամենաջերմ բարևն աշխարհում
Քոնն է, արեգա՛կ,
Նրա շոյանքից ծիլերն են հառնում՝
Ոնց կանաչ կրակ,
Լեռան լանջերին ձյուներն են թափում
Խնդության արցունք,
Լուրթ հորիզոնին ժպիտ պարգևում
Հովիտ ու բարձունք,
Իմ սիրտն ու հոգին կապույտ թռչունի
Թևեր են առնում,
Ու կյանքի խաղաղ հեռաստաններով
Հպարտ սավառնում:

***
Երկիրն արևի երկրպագուն է,
Արևն իր լույսով
Սիրահար-երկրին այնպես է թովում,
Որ նա մի հսկա թիթեռի նման
Նրա լույսերի շուրջն է պտտվում…
Երախտապարտ եմ քեզ, իմ փոքրիկ երկիր,
Որ քո սիրով եմ ես սիրահարված
Այս արեգակին:

ԴԻՄԱՑԵԼ ԵՄ

Օդի փոխարեն ես հուր եմ շնչել,
Հրի փոխարեն՝ օդ արտաշնչել,
Վարդի տեղակ ինձ փուշ են հրամցրել,
Ես դեռ կենդանի՝ մեռած գրանցել:
Երգս իմ հոգում վերքի են փոխել,
Վիշտն ու կսկիծը սրտիս մեջ մեխել,
Բայց դիմացել եմ ամեն փորձության
Ու քայլել ճամփով հավատարմության:

***

Չգիտեմ, թե
Ուր եմ գնում,
Մեն ու մենակ
Լուռ եմ գնում,
Բայց գիտեմ, որ
Կյանքիս ճամփին
Հույսիս լույսը
Վառ է մնում:

***

Օրս օրիս պահ տալով՝
Թանկ պահերս կորցրի ես,
/Թվում էր՝ այդ պահերն ինձ
Կուղեկցեին մշտապես/:
Այժմ, ինչ էլ անում եմ՝
Չեն երևում էլ նրանք,
Ու նրանց դեմ պարտվում են
Ամեն ջանք ու հնարանք:

***

Ծերացած ձին
Տենդագին
Տեղում դոփում է,
Եվ տեսնողը
Կարծում է՝
Իրեն կոփում է…

ՄԱՆՈՒՇԱԿ

Ձյունների աշխույժ հալոցքից հետո
Լույս աշխարհ եկար, իմ հեզ մանուշակ,
Դեմքիդ մի կապույտ ամոթխածություն՝
Պահվեցիր թփի կանաչ թևի տակ:
Շատերն հիացան քո համեստ տեսքով.
Գովեստի խոսքեր քեզ շռայլեցին,
Սակայն նրանց ջերմ ու բարի խոսքով,
Բարի հայացքով դու չտարվեցիր.
Քեզ թվում է, թե եկել ես աշխարհ
Ինչ-որ արատով, ինչ-որ թերությամբ,
Դրա համար էլ, իմ լավ մանուշակ,
Կյանքին նայում ես ամոթխածությամբ:

***

Դու իմ սիրտը մտար
Գարունների կանչով
Արթնացումի ոգին
Ծածանելով…
Դու իմ սիրտը մտար
Հույս-հավատով անմեռ՝
Ոնց հայրենի կարոտ
Ու հայրենի եզերք…
Ոչ-ոք չի կարող
Քեզ իմ կյանքից հանել,

Հայրենիքիս բախտով
Ապրող իմ երգ:

***
Ծովափի ավազներն օրնիբուն
Ծովի թարմությունն են շնչում,
Անապատի ավազներն անքուն
Հեռավոր ծովերն են տենչում…

***
Ասում են՝ հողում
Դառնություն չկար,
Եվ դառնությունը
Նրան են տվել
Բարբարոսները
Անսիրտ ու անսեր,
Դրանից է, որ
Հողից ծնվում են
Դառնահամ բույսեր:

ԱՌՎԻ ԼԵԶՈՒՆ

Առվի լեզուն բլբլում է,
Քանի սարում ձյունն հալվում է,
Մի կողմ թողած ծիլ ու ծաղիկ,
Սարի բուրմունք, հովիկ, շաղիկ՝
Խիճ ու քարի միջով վազում
Դեպի գետ է նա վռազում,
Բայց երբ ճամփին, որպես լավա,
Հանդիպում է շոգն ամառվա՝
Պապանձվում է նրա լեզուն
Եվ ափերի շուրթն է լիզում:

ԶԳՈՒՅՇ ՎԱՐՎԵՑԵՔ

Ճշմարտությունը՝
Հավատն է իմ սուրբ
Եվ իմ գոյության
Պայմանը հաստատ,
Նրա համար եմ
Ես եկել աշխարհ,
Որ ամեն գույնով
Չներկեն նրան,
Մի գույն ունի նա՝
Անբիծ մի ճերմակ՝
Հոգուս մտերիմ,
Ոնց մանկան ժպիտ:
Զգույշ վարվեցեք
Ճշմարտության հետ,
Ճշմարտությունը՝
Սուրբ հավատն է իմ:

***

Հավքե՛ր, որ եկաք շատ հեռուներից,
Մի լուր չե՞ք բերել իմ կորած հորից.
Անարգ թշնամու կույր գնդակի հետ
Կորել է կռվի դաշտում նա անհետ…
Ախ՛, լեզու առեք, իմ հույսի հավքեր,
Հայրս մեռա՞ծ է, թե՞ապրում է դեռ…

***

Այդ ինչ ուժ կա
Քո մեջ, բալիկ,
Անզեն բալիկ,
Անզոր բալիկ,
Որ հայրիկիդ
Ու մայրիկիդ
Դարձրիր ձեռքիդ
Խաղալիք…

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԱՌԵՐ

Հայոց բախտի ճամփեքին
Դուք բազում դարեր
Անմար կանթեղ եք եղել,
Մեսրոպյան տառեր:

Որ ցրելով մութ ու մեգ
Ճամփա եք բացել
Եվ հայը ձեր այդ բացած
Ճամփով է անցել:

Գոյատևման պայքարում
Դարձել եք վահան՝
Հայոց ոգին պաշտպանել
Փոթորկից մահվան:

Եվ նոր դարի ձայնով եք
Դուք հիմա հնչում,
Ու ձեզնով է ամեն հայ
Ապրում ու շնչում:

ՔԱՆԻ ՈՒՇ ՉԷ ԴԵՌ

Սիրտս նեղվում է,
Երբ գիտեմ՝ շուտով
Ձմեռ է գալու
Եվ հազար ու մի
Հոգս ու կարիքի
Տեղիք է տալու:
Սիրտս նեղվում է,
Որ լույս օրերս
Կարճանալու են,
Ու նրանց հաշվին
Մութ գիշերներս
Երկարելու են:
Դե, ինչ՝ մնում է,
Քանի ուշ չէ դեռ,
Հոգով ամրանամ,
Որ ցուրտ ձմեռվա
Դաժան խաղերին
Վաղը դիմանամ:

ԱՐՑԱԽՅԱՆ ԱՇՈՒՆ

Տխուր երգով ես եկել,
Ցավ ու վերքով ես եկել,
Անզոր ձեռքով ես եկել,
Արցախյան աշուն:
Ախ, քո ընթացքը շեղել,
Ճամփիդ արյուն են հեղել,
Քեզ անպաշտպան են թողել
Մեգ ու մշուշում:
Ծուխ ու վառոդ ես շնչում,

Լույս ու արև ես տենչում,
Դու օգնության ես կանչում
Բարեկամներին…
Բայց հավատը քո անմեռ
Թիկունք է քեզ, ինչպես լեռ…
Պայծառ օրդ կգա դեռ՝
Ժպիտը դեմքին,
Ու խինդ կառնի երգը քո,
Կապաքինվի վերքը քո,
Կզորանա ձեռքը քո՝
Պարզած Գալիքին:

ՄԻԱՑՈՒՄ

Մռով սարից՝ Զիարաթ
Մի ոգի է ու մի սիրտ,
Մի տենչանք է անարատ՝
Եռագույնի ծփանքով,
Որ պահում է արցախյան
Ոգին՝ խիզախ ու անպարտ,
Որ անարգել սավառնի
Արցախի սեգ երկնքով՝
Շուրթերին՝ այս հինավուրց
Լեռնաշխարհի կանչն արդար՝
Մեր վարդագույն իղձերով,
Զգտումներով առլեցուն,
Որ սրբազան մի բառով,
Որպես թռիչք մեր հոգու,
Ի լուր համայն աշխարհի՝
Մենք կոչել ենք՝ <<Միացում>>:

ԱՐՑԱԽԱԿԱՆ

Արցախը՝ ինձ սրբավայր է,
Գանձասար է, Ամարաս,
Զիարաթ է, Քիրս, Մռավ է,
Ալեհեր մայր, նորահարս:
Արցախը իմ սրտի մեջ է,
Սիրո երգ է, երգի հևք,
Դեռ չգրված գրքի էջ է,
Եվ տուն կանչող բարի ձեռք:
Արցախը իմ օջախն է հին,
Եվ նոր տունը հոյատես,
Հայացք ունի արևային,
Տեսք ու հմայք հրակեզ:
Արցախը սուրբ օրորոցն է
Իմ սիրելի թոռնիկի,
Բուրումնավետ ծաղկանոցն է
Իմ որդու և դստրիկի:
Արցախը իմ հույսն ու բախտն է,
Իմ հավատն է, ապագան,
Նրա ոգին միշտ անհաղթ է,
Ինչպես ոգին հայկական:

ԲԵՐԴԱՎԱՆ

Բերդ-ավան ես դու, հիրավի՛,
Ամուր, ինչպես բերդը քո հին,
Կուռ վահան ես՝ ընդդեմ դավի,
Դրոշ՝ պարզված լեռնաշխարհին:
Քեզ ուզեցին ծնկի բերել
Վայրի ցեղերն ամբարտավան,
Սակայն որդիք քո աներեր
Սատար եղան քեզ, Բերդավա՛ն:
Օ՜, դեռ պիտի ծաղկես, բուրես՝
Սեգ Արցախի դալար գրկում,
Երազները քո գուրգուրես,
Փառաբանվես տաղ ու երգում:
Դեռ պատմելու շատ բան ունես,
Ներկա-գալիք սերունդներին,
Պայքարի վառ պատմություն ես.
Պատկանում ես դու դարերին:
Բերդավան ես դու, իրավամբ,
Բարի ձեռքով հառնած ոստան,
Հպարտ եմ քո հպարտ անվամբ,
Նախադուռ իմ Արցախատան:

***

Ծիծեռնակ, որ քո թևին
Կանաչ գարուն ես տանում,
Ապա ինչո՞ւ քո թևը
Այդպես սև է միշտ մնում…

ՏԽՈՒՐ ԵՐԳ

Մի զարմանա, որ այսօր
Ժպիտ չկա իմ դեմքին.
Հայ եմ՝ տեսած Դեր էլ Զոր,
Կեղեքված է իմ հոգին:
Եփրատի խուլ հառաչն է
Ահաբեկված իմ սրտում,
Մոր ու մանկան մահկանչն է
Էությանս մեջ արթուն:
Դեռ հին վերքս չամոքված՝
Հարևանս բթամիտ,
Ատելությամբ համակված՝
Բերեց նոր վերք՝ Սումգայիթ:
Հետո վերքերն արնածոր
Ավելացա՛ն, շատացա՛ն,
Վշտիս գետը դարձավ ծով,
Խինդ ու ժպիդ չքացան…
Մի զարմանա, որ այսօր
Ժպիտ չկա իմ դեմքին.
Հայ եմ՝ բազում Դեր էլ Զոր
Տեսած բախտիս ճամփեքին…

***

Բարիք տվեց

Տնկած ծառս,
Պատին դրվեց
Ընկած քարս,
Կրկին հնչեց
Լռած լարս.
Արդարությունն
Ինձ էլ հասավ…
Արդար արևն
Ինձ էլ ժպտաց.
Տվեց և երգ,
Տվեց և հաց,
Խնդի փոխվեց
Թե վիշտ, թե լաց,
Ուրախությունն
Ինձ էլ հասավ…
Սիրո առուն
Սիրտս հոսեց.
Երգիս լեզվով
Սիրտս խոսեց.
Խոսքն ու հույզը
Միահյուսվեց.
Անմահությունն
Ինձ էլ հասավ…

ՈՐՈՆՈՒՄ ԵՄ ՔԵԶ…

Հարցում անելով
Հողին ու քարին,
Որոնում եմ ձեզ
Միշտ ու ամենուր:
Եվ ամեն անգամ,
Երբ ջերմ կարոտով
Նայում եմ որդուս՝
Ժպտում, համբուրում,
Դուք ավելի եք
Այրում իմ հոգին
Ձեր անտես հրով,
Շնչով հայրաբույր…
Արդյո՞ք, ու՞ր եք, ու՞ր,
Հայրական հայացք,
Հայրական ժպիտ,
Հայրական համբույր…

***

Սիրել եմ, ատել,
Ատել եմ, սիրել,
Ինչպես ծովն է իր
Ափերը սիրում,
Ինչպես արևն է
Խավարը ատում,
Երբեք չեմ եղել
Կյանքում անտարբեր,
Ինչպես ժայռերը
Գետերի հանդեպ…

Օ՜, իմ այս սերը՝
Լույսի պես անբիծ,
Աշխարհ է եկել
Իմ խոր սիրելու
Եվ խոր ատելու
Խրոխտ բախումից:

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՏՈՂԵՐ

***

Հազար ու մի
Ճամփա անցել՝
Ճիշտ քայլելը
Չի իմացել…

***

Ապրել է կյանքն իր
Զուր և անիմաստ,
Ցավոք, այդ մասին
Չկա ոչ մի փաստ…

***

Աթոռին կարգին
Նստել չգիտե՝
Բազկաթոռին է
Նա տիրապետել:

***

Սիրում է անվերջ
Խոսել ու խոսել,
Թե լսող չկա՝
Ինքն իրեն լսել:

***

Զգտում է լինել
Միշտ առաջինը,
Սակայն չի թողնում
Նրան վերջինը,
Քանզի վերջինն է
Այդ առաջինը,
Եվ առաջինն է
Միայն վերջինը:

***

Ձեռքերն հոգնեցին
Ծափահարելուց,
Մատը քեզ վրա
Թափահարելուց
Եվ անդամալույծ
Թե չդառնային,
Առաջվա թափին
Է՛լ թափ կտային:

***

Լույս է, թե արև՝
Խլուրդին բնավ
Չի վերաբերում,
Նա ծնված օրից
Խավարն է սիրում…
Մարդիկ էլ կան, որ
Խլուրդի նման
Ցանկանում են միշտ
Խավարում մնալ…

***

Հարևան են
Գորտն ու ձուկը,
Սակայն իրար
Չեն հավանում,
Քանզի գորտը
Միշտ աղմկում,
Ձուկը անվերջ
Լուռ է մնում:

***

Մի օր տեղին,
Թե անտեղի՝
Հայհոյում էր
Մուկը փղին,
Երբ մինչև վերջ
Փիղը լռեց՝
Արջը նրա
Կողը հրեց.
- Պաղեցրո՛ւ
Քո ոտքի տակ
Այդ հիմարի
Գլուխը տաք:
- Կամաց խոսիր,
Նա կլսի՝
Նոր վարիչն է
Տեղամասի:

ԱՊԵՐԱԽՏ ԷՇԸ

Մնացել էր
Էշը դրսում,
Ձմեռ էր, ցուրտ.
Շատ էր մրսում…
Բարեսիրտ ձին
Խղճաց նրան՝
Իր մոտ մի տեղ
Տվեց հարմար…
Նա ձիու հետ՝
Ամբողջ տարին
Կերավ առատ
Խոտ ու գարի,
Ու երբ նրա
Վիզն հաստացավ՝

Ոգի առավ,
Էկտիացավ,
Ձիուն անգամ
Արհամարհեց,
Նրան գոմի
Անկյուն հրեց:
Մի օր էլ նա,
Խիստ զայրացած՝
Բարերարին
Այսպես ասաց.
- Տեսնում ես, որ
Ձաղանում եմ,
Եվ իմ տեղը
Նեղանում է,
Բարի եղիր՝
Այս անգամ էլ
Ողջ կապոցը
Էոկ ինձ թողնել…

***
Գլուխն իրենն էր,
Խելքն՝ ուրիշինը,
Լեզուն իրենն էր,
Խոսքն՝ ուրիշինը:
Եվ ասում են՝ նա
Փառքի տիրացավ
Խելքով ուրիշի,
Խոսքով ուրիշի…

ՆՐԱՆ ԻՆՉ ՓՈԻՅԹ

Օրը լուսանում,
Օրը մթնում է.
Նրան ի՞նչ փույթ, թե
Տքնողը ո՞վ է.
Հիրավի մանկան
Նման է դատում՝
Ծնողները կան՝
Ինքն ապահով է:

ԵՐԵՔ ԿԱՐԾԻՔ

Հոր կարծիքով՝
Փեսացուն
Պիտի լինի
Խոնարհ, հեզ,
Բանի անխոնջ,
Անտրտունջ,
Ինչպես եզ:
Մոր կարծիքով՝
Փեսացուն
Պիտի լինի
Ամաչկոտ,
Ձոքանչասեր,

Զգայուն,
Քիչ վախկոտ:
Իսկ աղջկա
Կարծիքով՝
Կամք ունենա,
Չունենա՝
Կնոջ կամքին
Միշտ հլու
Հպատակ մնա…

ԿԱՐԾՈՒՄ Է

Մի դատարկ բանի
Համար կվիճի,
Լուրջ չընդունեցիր՝
Խիստ կնեղանա,
Խոսքը մի քանի
Անգամ կշրջի
Եվ իր ասածով
Շատ կգոհանա:
Գլուխս մի կերպ
Փրկելու համար՝
Ինչ որ ասում է՝
Գլխով եմ անում
Ու կարծում է, թե
Իր ամեն մի բառ
Ես հալած յուղի
Տեղ եմ ընդունում:

***
Ճանապարհը հարթ,
Ինքը՝ հասուն մարդ,
Բայց քայլում է ոնց
Մանուկ՝ դողալով.
Երևի նոր է
Քայլել սովորում.
Մինչ այդ ճամփա է
Անցել… սողալով:

***
Գայլերի մեջ
Գառ էր խեղճ,
Գայլի փոխվեց
Գառների մեջ:

***
Հավն ածեց մի ձու
Երկդեղնուցանի,
Ապա երկու օր
Ազատ թափառեց.
Նա կարծում էր, թե
Այդ միակ ձվով
Երկու ձու տալու
Պարտքը կատարեց:

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ավանակի
Բնությունն է.
Երկար-բարակ
Չմտածի,
Գարի ուտի
Ու արածի,
Ու չզգալով
Ցավն հարվածի՝
Տա աքացի,
Բայց երբ բեռ են
Դնում մեջքին՝
Զոր է տալիս
Իր կարճ խելքին…

ԱՅԾԻ ԱՅՑԸ

Հիվանդացավ
Քավորն այծի,
Բժիշկ այծը
Գնաց այցի.
- Վայ, բարեկամ,
Ի՞նչ ես դարձել,
Շատ թեթև եմ
Ես քեզ կարծել,
Իսկ դու ոնց ես
Ընկել ձեռից,
Շատ է հուզում
Վիճակդ ինձ.
Լեզուդ՝ կապտել,
Գույնդ թռել,
Ականջներդ՝
Կախվել, սառել,
Թավ միրուքդ
Ցանցառացել,
Կուչ ես եկել,
Մի բուռ դարձել…
… Հիմա ասեք՝
Եկավ բուժի՞,
Թե՝ իր այցով
Նրան տուժի…

***

Հպարտ է գորտը՝
Առվակից՝ քարափ,
Քարափից՝ առվակ
Ցատկելու համար,
Եվ նրա աչքին
Մի գորտուկ չարժեն
Անսահման ծովի
Ձկներն անհամար…

ԿԱՐԱՊԻ ՄՐՑԱԿԻՑԸ

Հալից ընկած
Մի ծեր սագ
Մտավ կեղտոտ
Մի լճակ.
Վահ, իսկական
Կարապ եմ,
Չկարծեք թե
Պարապ եմ:
Չէ, ինչ կարապ,
Կարապից
Դուք լավ լողորդ
Կարծեք ինձ…
Հոխորտում է
Ծեր սագը
Լող է տալիս ու շողում:
Բայց գիտե՞, որ
Կարապը
Կեղտոտ ջրում
Չի լողում:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Դաշտում մեկտեղ
Արածելիս
Էշը ձիուն
Հարց է տալիս.
- Ականջներս,
Իմ ցեղակից,
Ինչո՞ւ են կախ,
Իսկ քոնը՝ ցից…
- Մի՞թե պարզ չէ,
Լավ բարեկամ,
Իմը կարճ են,
Քոնը՝ երկար:
Եվ էշը դա
Ճիշտ համարեց.
Խելքի հարցում
Չհամառեց:

ՆԵՂԱՑԱԾ ԷՇԸ

Մի բուռ կանաչ
Խոտի համար
Էշը այծին
Ասաց՝ <<հիմար>>,
Սա էլ խոսքի
Տակ չմնաց՝
Իր դրկիցին
<<Ոչխար>> ասաց:
Էշն այդ բառից
Խիստ նեղացավ՝
Խոտը թողեց
Ու հեռացավ,
Իբր էշը
Ուր է հասել,
Որ <<ոչխար>> են
Իրեն ասել…

ԵՎ ՀԱՐՑԸ ԼՈՒԾՎԵՑ

Ոչ ոք շանը
Տեր չկանգնեց,
Ստիպված էր
Նա թափառել,
Թափթփուկներ
Որոնելով
Գոյությունը
Մի կերպ պահել…
Բայց քնա՞ծ էր
Սանկայանը,
Որ թրև գար
Շունը անտեր.
<< Չհապաղել,
Ամենախիստ
Միջոցներով
Պայքար մղել
Թափառական
Շների դեմ…>>
…Եվ շան հարցը
Լուծվեց արդեն:

ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Գայլը մի քանի
Ոչխար է կերել,
Արջն իմացել է,
Բայց նրան ներել:
Այծը մի կանաչ
Տերև է պոկել՝
Արջն անխղճորեն
Բկին է չոքել.
Իբր բնության
Պահպանման մասին
Օրենքը՝ այծը
Համարել է սին:
Եվ նրա պոկած
Տերևը միակ
Նա գնահատել է
Ոչխարից էլ թանկ:

***
Տաշած քարերը գետնին մնացել՝
Անտաշ քարերն են պատը բարձրացել,
Եվ տհաճության ծանր բեռան տակ
Տքնում է պատը հլու-հպատակ…
Ես զարմանում եմ՝ այս ի՞նչ է եղել,
Մի՞թե վարպետն է իր միտքը շեղել…

ԱՎԵԼՈՐԴ ԴԱՍԵՐ

Գայլն իր ձագին

Դաս էր տալիս.
- Ձագ, լսիր ինձ,
Ապա՝ դատիր,
Կյանքիդ ճամփան
Դու անցնելիս,
Ում չսիրես՝
Գլուխն հատիր.
Դա մեր ցեղի
Սովորույթն է,
Որ գալիս է
Մոր կաթի հետ,
Դավեցիր այդ
Սովորույթին՝
Կկործանվես
Իսկույն ևեթ:
Էլ ինչո՞ւ է
Գայլը ձագին
Դասեր տալիս
Սովորույթի,
Երբ գիտե, որ
Իր չար ոգին
Կա արյան մեջ
Եվ սերնդի:

ՇԼԴԻԿԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Թռչնաբուծական
Ֆերմայի վարիչ
Շլդիկի հարցն էր
Ժողովում դրված,
Նրան անխնա
Քննադատեցին
Թևավորների
Պակասի համար:
Երբ խոսքը վերջում
Տվեցին նրան,
Նա ասաց. <<Իրավ,
Ճիշտ է բոլորի
Ասածն իմ մասին,
Ես խոստանում եմ
Անել ամեն բան,
Որ ճուտ անգամ
Էլ չպակասի,
Խնդրում եմ՝ միայն
Ստուգման համար
Ֆերմա չուղարկել
Խարդախ աղվեսին>>:

ԼԻՆՈՒՄ Է ԵՎ ԱՅՍՊԵՍ

Այնպես եղավ՝
Մուկը մի օր
Դարձավ բարձր
Պաշտոնավոր,

Մկան աչքին
Սարսափելի
Նախկին կատուն՝
Նրա հլու
Սպասավոր:
Օգտվելով իր
Բարձր դիրքից,
Մուկը այսպես
Դիմեց կատվին.
- Բարեկամս,
Ախր, ե՞րբ ես
Քեֆ սարքելու
Դու իմ պատվին:
Գիտես՝ աչքս
Թեքեմ քեզնից՝
Կկործանվես
Միանգամից…
Մուկը մի պահ
Աչքն իր թեքեց,
Կատուն նրա
<<Երգը երգեց>>:

ՔԾՆՈՂԸ

Իր պետի սիրտը
Շոյելու համար
Նա բաց չէր թողնում
Առիթը հարմար.
Պետը տխրում է՝
Ինքն արտասվում է,
Նրանից էլ շատ
Լարվում, հուզվում է,
Պետը ժպտում է՝
Ինքը փայլում է,
Յուղի պես նրա
Ժպտից հալվում է,
Սակայն նա ուրիշ
Շնորհք էլ ունի.
Երբ պետին հանեն՝
Այլ դեմք կընդունի:

***
Քծնել տրված է
Նրան ի վերուստ,
Հոգին ծախել է,
Փողով է հարուստ,
Մինչդեռ երդվում է
Ապ ու պապերով,
Որ կյանքն ապրել է
Քրտինք թափելով:

***
Նա գիտնական էր,
Չկարողացավ

Գոյություն պահել:
Խոհարար դարձավ…
Ասում են հիմա
Չունի գլխացավ,
Բայց շատ ուտելուց
Ունի փորացավ:

***

Ցավ չունես, սակայն
Տեղի-անտեղի
Տրտնջում ես այս
Խաղաղ օրերում,
Ի՜նչ անի հապա
Զինվորը նախկին,
Որ սրտում մահվան
Բեկորն է կրում:

ՄԻ ՊԱՇՏՈՆԱՍԵՐԻ

Տեսան՝ սիրում է նա պաշտոն ու դիրք,
Թեկուզ և չուներ ոչ շնորքի, ոչ՝ ձիրք,
Տվեցին պաշտոն, իրավունք, կնիք…
Ինքն իրեն եկավ թե շնորհք, թե՝ ձիրք:

Գրքի նկարների հեղինակ ***Հայկ Սայադյան***